

# ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

**DEGHEGADOU**

ديجيجادو

Հրատարակությունը հանդիս է Հ.Գ.Ը.Մ.Բ.

نشره جمعية القادسية للتحرير والتنمية العامة

## ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ 80-ԱՍԵԱԿ (1924-2004)



Այսպե՛ղ՝ ծնունդ,  
Այնպե՛ղ՝ կնունք,  
Ազքալոյսի ժպտուն օղի:  
Ածէ՛ն ճարուռ՝ հավաքավայր,  
Եւ ածէ՛ն վանք՝ ուխտապեղծի:

Ու վանք քանոյ ածէ՛ն ճամբայ ու սայլուղի  
Նախըզվում են փնակ-փնակ ոտնահետքով.

Տրեխաւոր, ճաշիկաւոր, բոբիկ ոտքով

Վանք են գնում

Յնուռ-ձօցիկ ածէ՛ն գիւղից:

Եւ հնչում է դիւլ-կուռնան,

Որ վանքերը հնամենի,

Մարունները ծէկէն դառնան

Խրախճանքի արբշիռ ու ցոփ հրապարակ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՍՔԱԳԻՐ  
 Արաքսի Տեօպեթեան

Եթէ՛ Ապրէ՛ր  
 Պարոյր Սեւակի Յիշատակին 1

Տոթթ. Փրոֆ. Սեդա Տատոյեանի  
 Ղասախօսական Երեկոներու Շարքը 3

ԳԵՂԱՐՈՒԻՏՍԱԿԱՆ  
 ՁԵԼԱԻՐՈՐԻՄ  
 ՇԱՀԷ ԼՈՒՍԱՐԱԵԱՆ

Աղեքսանդրիոյ Կաթողիկէ Հայոց  
 Նորոծ Առաջնորդ Գուսան Եպիսկոպոսի  
 Գահակալութիւնը Գահիրէի Մէջ 6

ՀԲԸՄիութեան 17-րդ Նաւասարդեան Խաղերը  
 Եւ Ե ի պտտահայ Պատուիրակութիւնը 7  
 Սօսի Յակոբեան

ՀԱՍՎԱՐԳՉԱՅԻՆ  
 ՇԱՐՈՒԱԾՔ  
 Անի Պօղոսեան

Թո՛ղ Լոյս Սփռէ Կաճառն Այս Լուսաշող 11

Հարցազրոյց 12

Հալլէյի Քոմէթը Նկարուած Հայկական  
 Հին Մետաղադրամին Վրայ 14  
 Թրգմ. Ս. Թ.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Nubar Printing House

Լուրեր ՀԲԸՄ-ի Չանազան Մասնաճիւղերէն  
 -Աշխատանքի Գործընթացի Կրկնակի 15  
 Գնահատանք 15

-Հարաւային Ամերիկա 15  
 -Նիւ Եորք 16  
 Թրգմ. Անի Պօղոսեան

-ՀԲԸՄ Հայ Կին - 10-Ամեակ 17  
 -Գահիրէ 17

Բանակում Գահիրէի ՀՍԸՄ ՆՈՒՊԱՐԻ  
 Մարգարանէն Ներս 18

Նոր Հրատարակութիւն 19  
 «S.»

Անդամական 20

Թիտ 32 Նոր Շրջան  
 Յուլիս 2004



# ԵՔԷ՛ ԱՊՐԷ՛Ր ՊԱՐՈՅՐ ՍԵԼԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԵՔԷ՛ ապրե՛ր պիտի ըլլար 80 տարեկան: Սակայն, ընդհատեցաւ Պարոյր Սելակ նորարար, ինքնատիպ եւ ըմբոստ բանաստեղծին կեանքը, ցարդ չպարզաբանուած ինքնաշարժի արկածի մը զոհ դառնալով:

Արդէն 33 տարի է, ան իր այնքա՛ն սիրած «քաղցրանուն, բաճրանո՛ւն, տառապա՛ծ, փառապա՛նծ» հայրենքին հողը գրկած, կը մնայ մօտ ու հեռու, իր նոյնքան սիրելի ու պաշտելի, երկար ճամբայ կտրած ժողովուրդէն: Ժողովուրդ՝ որ իր պանդխտութեան կսկիծը դարձուցած է «Կռունկ» եւ խոր վերքը՝ «Յորովել»: Ժողովուրդ՝ որ կը զարմացնէ զինք երբ կը նայի անոր «անցեալին ե՛լ տանջալից, ե՛լ պանծալի, ու հարց կու տայ:

**Հագար ան ամ դու ընկնելով՝ ինչպե՞ս ելար,  
Ո՞նց ապրեցիր՝ հագար ան ամ երբ դու մեռար:**

**Ինչ հրաշքով չմարեցիր, ինչպէս նրանք,  
Որ մեծ էին, հրդեհ էին, իսկ դու կրակ:**

Եւ ապա կու տայ իր իսկ հարցումին պատասխանը:

**Եւ չի մարել նա դարերում մահամնայ,  
Մնացել է, որովհետեւ մի հուր էր նա,**

**Որ չի մարում օտար հողմից, այլ արծարծում,  
Եւ աւերիչ հրդեհի պէս չի տարածում ...**

Ու հպարտ էր Պարոյր Սելակ իր ժողովուրդով:

**Հպարտ եմ ես իմ ծիւղերով ու սաղարթով,  
Բայց առաւել՝ իմ արմատով  
Եւ իմ բնի վաղեմութեամբ,  
Ժողովուրդիս ծերունական  
Խիստ բնական  
Խոհեմութեամբ  
Բայց աւելի՝  
Նոր շիւերի  
Դալարութեամբ -  
Նրա ջահել որդիներից հենց լաւերի  
Խելառութեամբ ...**



Այո՛, եՔԷ ապրեր Պարոյր Սելակ, պիտի ըլլար 80 տարեկան:

Սակայն ...

Աւելի քան երեք տասնամեակ է ան «Ազատ» է արդէն: Ազատ են նաեւ այլեւս իր հայրենիքն ու ժողովուրդը: Ազատ են այլեւս ԻՐԵՆ ԶԱՄԱՐ նոյնիսկ՝ իր պատուհանէն երեւցող գերուած Մասիսները:

Ան այլեւս «երգ»ը պէտք չունի որպէս վիզա, այցելելու Մասիսէն ա՛յն կողմ գտնուող իր գրչակիցներուն, Յակոբ Պարոնեանին՝ որ Պոլսոյ թաղերուն մէջ օր մը պտոյտ կատարած ու իր ծիծաղի սահանքին մէջ առած էր մեր ջոջերը, Պետրոս Դուրեանին, Միսաք Մեծարեցին, Դանիէլ Վարուժանին ու Սիամանթոյին, նաեւ իր «Անլռելի Չանգակատան» հերոս՝ Կոմիտասին:

**Այնտեղ Կոմիտասն էր - մեր դարաւոր եր ի մեմբրա՛նը թրթռուն,**

**Նա՛, որ օտարներին մեր լեփլեցուն հո ին թար մանում էր տաղով:**

Հոն են անոնք բոլորը, հոն են միասնաբար: Բայց նաեւ հոս են իրենց խաղ ու տաղով, որոնք աշխարհի վրայ ցրուած իրենց մանուկ թէ ջահել որդիներու շրթներէն կը հնչեն իւրաքանչիւր հայ վարժարանի



Մեջ եւ իւրաքանչիւր հայ բեմի վրայ:

Մեզ հետ է Պարոյր Սեւակ իր քերթուածներուն մեջէն մեզի ուղղած ազնուութիւն, անկեղծութիւն ու սեր բաշխող տողերով, «իրերի դատ ու դատաստանը»-ի այնքան այժմեական պատգամով:

**Եւ այսուհետեւ պիտի՝  
Առաջին**


**Աթոռ ասելիս հասկանանք վարակ  
Եւ զ ոյշանանք՝  
Ինչպէս վարակից:  
Ուստի եւ՝**

**Երկրորդ**

**Աթոռից միշտ էլ զերծ պահել նրա՛նց,  
Ում ինքը, կեանքը դեռ չի սրսկել  
Ա՛յն ախտականիսիչ համապատասխան շիճուկով,  
Որի մի ասեղն արժէ ... մի բանտարկութիւն  
Կամ մի այնպիսի ... առաքինութիւն,  
Որ ենթակայ չէ առք ու վաճառքի:  
Եւ այսո՛ւհանդերձ՝**

**Երրորդ**

**Ով նստեց Աթոռի վրայ  
(Կամ այլ կերպ ասած՝ դաւեց աթոռ  
Կամ արժանացաւ բարձր աթոռի),  
Օրէնքի ուժով պարտաւոր է նա  
Յիշել, որ ինքը երկոտանի է,  
Այն էլ՝ բարձրա ոյն,  
Եւ ո՛չ մի դէպքում իրաւունք չունի  
Վերստին դառնալ նո՛ր չորքոտանի,  
Առաւել եւս՝ չորքոտանու ճո՛րտ:  
Հակառակ դէպքում  
Այս նոյն ամպիոնից,  
Այս նոյն բերանով կը հնչի արդէն  
Այն՛իսչ օրէնքի Այսի՛նչ յօդուածը:**



Եթէ ապրէր Պարոյր Սեւակ, պիտի տեսներ այսօր, թէ իր բուռ մը հայրենիքին մեջ, «ագատութիւնը իր բառէ գունեղ շապիկը ճեղքած տրուած է ճախրանքի»: Պիտի տեսներ թէ ինչպիսի հպարտութեամբ եւ անհատոյց երախտիքով իր ժողովուրդին գաւակները կը յիշատակեն իր ծննդեան 80-ամեակը եւ գուցէ մօտ ապագային մեր ժողովուրդը յիշելով անոր «Նոր Տարի»ին ուղղած փափաքը փորձէ իրականացնել գայն:

**Ու որ այլեւս ո՛չ մի ժողովուրդ,  
Ո՛չ մի ազ . ու ցեղ  
Պատմութեան քափից ու սեւ մրուրից չթունաւորուի,  
Դառնայ լիազօ՛ր, դառնայ լիիրա՛ւ,-  
Ու մենք, վերջապէ՛ս, հասկանանք իրար,  
Ամենքըս, բա՛ւ է, հասկանանք իրար.  
Նաեւ հասկանանք,  
Որ մեր իսկ արեան -նդիկը մանրը  
Այս երկիր կոչուած -նդից աւելի մեծ է ու ծանր ...**

Եթէ՛ ապրէր ... Սակայն ...:

Արաքսի Տեօվլէթեան



# ՏՈՔԹ. ՓՐՈՖ. ՍԵՂԱ ՏԱՏՈՅԵԱՆԻ\* ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐՈՒ ՇԱՐՔԸ

Ամեն անգամ որ ՀԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիւղը Սաթենիկ Ճ. Չագըր ֆունտին ընձեռած միջոցներով ծրագիր մը կ'իրականացնէ, սիրտս կը խայտայ անհուն հրճուանքով ու հոգիս կը լեցուի երախտագիտական անկեղծ զգացումով ոչ միայն բարերարուհի տիկնոջ հանդէպ, այլ նաեւ, իր առաքելութեան գիտակցութիւնը ունեցող, ՀԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիւղի վարչութեան՝ որ շօշափելի իրականութեան կը վերածէ բարերարուհիին տեսլականը:



*Տոքթ. փրոֆ. Սեղա Տատոյեան  
ելոյթ կ'ունենայ Եգիպտոսի  
Մշակոյթի Բարձրագոյն Խորհուրդի  
Կեդրոնին մէջ:*

Վարչութիւնը Սաթենիկ Ճ. Չագըր ֆունտին միջոցներով Եգիպտոսի մէջ զանազան առողջապահական, ընկերային, կրթական, մշակութային, հրատարակչական եւ այլ ծրագիրներ կ'իրականացնէ եւ յատկացումներ կը կատարէ զանազան միութիւններու:

Մշակութային ծրագիրներու ծիրէն ներս, վարչութիւնը ընդհանրապէս կ'աշխատի կազմակերպել մշակութային այնպիսի ձեռնարկներ, որոնք մեր պատմութիւնը, մշակոյթն ու արուեստը լաւագոյնս կրնան ներկայացնել ոչ միայն եգիպտահայ գաղութին, այլ նաեւ օտար հասարակութեան:

Նման ծրագիրներու յաջողութեան համար, ՀԲԸՄ-ի Գահիրեի վարչութիւնը հայրենիքէն կամ արտասահմանէն կը հրաւիրէ յայտնի մտաւորականներ եւ արուեստագետներ, որոնք հրապարակային ելոյթները, եգիպտացի մտաւորականներու հետ հանդիպումները եւ մամուլի զանազան ներկայացուցիչներուն տուած հարցազրոյցները, իրենց դրական արձագանքը կը գտնեն հայ թէ օտար մամուլի էջերուն մէջ, նպաստելով հայութեան եւ անոր պատմութեան, մշակոյթին ու արուեստին ճանաչման:

Պետք է նշել նաեւ մամուլի էջերուն մէջ լոյս տեսած յօդուածներուն մէկ այլ կարեւոր նպաստը, որն է արդի եգիպտահայութեան պատմութեան մէկ երեսակին ներկայացումը ապագայ պատմաբանին համար:

Ընթացիկ տարուան ընթացքին ՀԲԸՄ-ի կազմակերպած մշակութային ձեռնարկներուն վերջինը՝ դասախօսական երեկոներու շարք մըն էր, որ տեղի ունեցաւ Մայիսի առաջին շաբթուան ընթացքին:

Այս առթիւ Լիբանանէն յատկապէս հրաւիրուած էր Պէլրուֆի Ամերիկեան Համալսարանի դասախօս՝ Տոքթ. Փրոֆ. Սեղա Պարսումեան – Տատոյեանը:

Փիլիսոփայութիւնն ու արուեստը մասնագիտութիւն ընտրած այս հայուհին, միջազգային գետնի վրայ ճանչցուած մտաւորական է եւ արուեստագետ:

Կը բաւէ աչք մը նետել 1965–2004 երկարող իր կտրած ուղիին, համոզուելու համար որ ան կը պատկանի հայուհիներու թիւով քիչ այն փառանգին, որոնք՝ ինչպէս կը բնութագրէ զայն Վահէ Վահեան, օժտուած են իմացական բացառիկ կարողութեամբ, քննախուզական ոգիով, աշխատասիրութեամբ եւ համոզումներու ինքնուրոյնութեամբ:

Այս կը վկայեն նաեւ իր հեղինակած գիրքերը, գիտական պարբերականներու եւ գիրքերու մէջ լոյս տեսած 30-ի հասնող իր յօդուածները, 1990–2003 թթ. տեղի ունեցած միջազգային զանազան խորհրդրդաժողովներուն ներկայացուցած իր ուսումնասիրութիւններն ու ԱՄՆահանգներու կարգ մը համալսարաններուն մէջ տուած իր դասախօսութիւնները, որոնք իրենց պարունակին մէջ կը քննարկեն պատմափիլիսոփայական, կրօնական, արուեստի եւ այլ բնագաւառներու հետ առնչուող նիւթեր, ինչպէս՝ «Նոր լոյս միջնադարեան հայ իսլամական յարաբերութիւններուն վրայ», «Իսլամական աղբիւրները Հայաստանի եւ հայերու մասին», «Ֆաթիմեան հայերու ֆենոմենը», «Ֆեմինիզմը հայկական պատմութեան մէջ», «Միջնադարեան հայկական արուեստը», «Միջնադարու հայ աղանդաւորներու փիլիսոփայական աւանդը 4–14րդ դարերուն», եւ այլն:

Տոքթ. Սեղա Տատոյեան որ գիտակ է հայերէն (գրաբար եւ աշխարհաբար), արաբերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ թրքերէն լեզուներուն, երեք դասախօսութիւններ տուաւ Գահիրեի մէջ, որոնց առաջին երկուքը անգլերէն, իսկ երրորդը՝ հայերէն լեզուով:

Մայիս 4, 2004-ի երեկոյեան, Եգիպտոսի Մշակոյթի Բարձրագոյն Խորհուրդի Կեդրոնին մէջ Տոքթ. Տատոյեան դասախօսեց «Իսլամական – Հայկական Փոխազդեցութիւններ եւ Պատմագրութիւն նիւթին մասին, ուսումնասիրութեան որպէս առարկայ ունենալով, ֆաթիմեան հայերու պարագան:

Երկրորդ դասախօսութիւնը տեղի ունեցաւ Մայիս 6, 2004-ին, Գահիրեի Ամերիկեան համալսարանի (Հայկական Սենեակ) "Armenian Room"-ին մէջ, ուր դասախօսուհին խօսեցաւ «Հայերը Իսլամական Աշխարհին Մէջ, Մշակութային – Զաղաքական Փոխազդեցութեան Նմանակներ» նիւթին մասին:



*Մայիս 4-ի Դասախօսութեան ներկայ հասարակութենէն մաս մը:  
Առաջին կարգի վրայ՝ ՀԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիւղի  
ատենապետ Տիար Օնիկ Պլըքտանեան եւ տիկնոջ:*



Գահիրեի Ամերիկեան Համալսարանի «Armenian Room»-ին մէջ ելոյթի պահուն. կողքին՝ Համալսարանի տնօրէնը:

Երկու դասախօսութիւններուն ներկայ էին օտար եւ հայ հասարակութիւն մը: Առաջին դասախօսութեան բացման խօսքը կատարեց Կեդրոնին պատասխանատուներէն՝ Տոքթ. Ապտու Զասէմ իսկ երկրորդին՝ Ամերիկեան Համալսարանի Ընկերային Գիտութիւններու ամպիոնի ղեկավար Տոքթ. Նիքոլաս Հոփքինգ, որոնք ներկայացուցին Տոքթ. Փրոֆ. Սեդա Տատոյեանը հրաւիրելով զայն տալու իր դասախօսութիւնը:



«Armenian Room»-ի մէջ կայացած դասախօսութեան ներկաներէն մաս մը:

Իրարու առընչուող այս երկու դասախօսութիւնները որոնք զիրար կը լրացնէին, ունկնդիրին փոխանցեցին հետաքրքրական տեղեկութիւններ Ֆաթիմեան հալիֆայութեան շրջանին Մերձաւոր Արեւելքի հայերուն իրավիճակին, իսլամներու հետ ունեցած քաղաքական եւ մշակութային փոխյարաբերութիւններուն, իսլամա-հայկական ինդրայարոյց ուսումնասիրութիւններուն եւ միջնադարեան ժամանակաշրջանի Հայաստանին ու հայերուն մասին արաբական պատմագրութեան եւ արաբական ու հայկական սկզբնաղբիւրներուն մէջ եղած տեղեկութիւններուն մասին:

Յարգելի դասախօսուիին անդրադարձաւ Ֆաթիմեան հայերու նախնիներուն, Միջագետքի եւ Սուրիոյ մէջ իսլամա-հայկական ուժերուն ու ազդեցութեան եւ ի վերջոյ Ֆաթիմեան հալիֆայութեան հայ վեզիրներու շրջանին, սկսելով Լեճմ էլ - Տին Պատր էլ - Կամալիէն (1074 - 1094), մինչեւ այդ շրջանի վեզիրներու եզակի դեմքերէն Թալալը Պին Րուզբիք (1156-1161), որ իր վարչական եւ ռազմական կարողութիւններուն կը միացնէր նաեւ բանաստեղծական տաղանդը: Ան նշեց կարեւորութիւնը այդ ժամանակաշրջանին Եգիպտոսի մէջ հայերու թիւին աճման եւ Գրիգոր Բ. Պաղարունի կաթողիկոսին Եգիպտոս այցելութեան 1075-1078:

Դասախօսուիին արտայայտուեցաւ իխուան Էլ - Սաֆայի «Րասաէլ» ստեղծագործութեան, որու մէջ հայերուն մասին եղած տեղեկութիւնները, իր մէջ արթնցուցած էր այն միտքը, որ գուցէ հայ-իսլամական ուղղակի յարաբերութիւններ գոյութիւն ունեին, անկախ պաշտօնական կառույցներու յարաբերութիւններէն եւ այս միտքը խթան հանդիսացած էր իրեն ուսումնասիրելու հայկական եւ իսլամական փիլիսոփայութիւնները:

Դասախօսուիին շեշտեց թէ Ֆաթիմեան ժամանակաշրջանի «Հայկական Շրջան»ը 1074-1171, տարանցիկ եւ լուսանցքային երեւոյթ մը չէր հայկական եւ մերձաւոր արեւելեան պատմութեան մէջ, այլ լայն տարողութեամբ շարունակուող դաշնութիւն մը իսլամներու եւ 8-14-րդ դարերու հայ արտակարգ հաստատութիւններու միջեւ: Որպէս այդ՝ երեւոյթը յատկանշական է նկատի ունենալով հայկական բազմակողմանի փորձառութիւնը իսլամական աշխարհին մէջ եւ վերստին գրելու պատմութիւնը նախնական փոխազդեցութիւններու լոյսին տակ:

Տոքթ. Ապտու Զասէմ հրաւիրեց Ֆաթիմեան Շրջանի պատմութեան մասնագետ՝ դասախօսութեան ներկայ, Տոքթ. Այման Ֆուատ որ նոյնպէս արտայայտուեցաւ Շրջանի հայ վեզիրներուն մասին:



Եգիպտոսի Մշակոյթի Բարձրագոյն Խորհուրդի Կեդրոնին մէջ Տոքթ. Այման Ֆուատ ելոյթի պահուն:

Տոքթ. Տատոյեան իր երրորդ դասախօսութիւնը տուաւ հայերէն լեզուով, Ուրբաթ 7 Մայիսին Գահիրեի Ազգ. Առաջնորդարանի Դահլիճին մէջ, ուր հաւաքուած հայ հասարակութեան ներկայացուց «Հայկական Ֆեմինիզմի ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ Ծագումը»:

Դասախօսուիին պարզելէ ետք թէ «Ֆեմինիզմ» ըսելով ինք նկատի չունի բառին ժամանակակից հասկացողութիւնը, բացատրեց թէ հայոց մօտ այդ եւ կնոջ հաւասարութիւն գոյութիւն ունեցած է նոյնիսկ քրիստոնէութեան մուտքէն առաջ եւ թէ 378-379 կայացած Կանկրայի ժողովին 24 կանոններէն 5-ը կանանց ուղղուած էին:

Ան իր խօսքին մէջ շեշտեց թէ հայկական ֆեմինիզմը մաս կը կազմէ քրիստոնէութեան Հայաստան մուտքին եւ ընկերային ու մշակութային փոփոխութեան ամենէն հիմնական հանգրուաններուն:

Ապա, անդրադարձաւ ենթադրաբար 5-րդ դարու վերջաւորութեան Հայաստանի մէջ յառաջացած Պաղարունի արհաւիրական շարժումին ու անոր գաղափարախօսութեան ու կրօնափիլիսոփայական հիմքին, որ կը հաւատար բարի եւ չար աստուածներու գոյութեան, բարին համարելով երկինքի աստուածը իսկ չարը՝ երկրի: Պաղարունի



կեանները իրենց ենթակայ շրջաններուն մէջ վերցուցած էին գոյքային եւ դասակարգային անհաւասարութիւնները եւ կինը ճանչցած հասարակութեան հաւասար անհատ ու ամուսնութիւնը իրականացուցած աշխարհիկ ձեւով:

Թոնդրակեան շարժումը եւս եղած է աղանդաւորական շարժում մը Հայաստանի մէջ, որ հիմնած է Սմբատ Չարեհաւանցին ու իր գաղափարախօսութիւնը քարոզած 9-րդ դարուն: Թոնդրակեցիները ընդունած են անտեսանելի եւ անշօշափելի Աստուծոյ գոյութիւնը, սակայն մերժած են Զրիստոսի աստուածութիւնը միայն մարգարէ համարելով զայն, նաեւ ժըխտած են հոգիի անմահութիւնը եւ հանդերձել կեանքը:

Թոնդրակեցիներու մօտ եւս մարդիկ անկախ իրենց սեռէն եւ դասակարգէն համահաւասար էին:

Թոնդրակեան շարժումին տարածման մէջ աշխոյժ գործունեութիւն ունեցած են նաեւ կիները: Նշանաւոր եղած են Հրանուշ, Կամարա, Ախսի եւ այլ կիներ որոնք



Տոքթ. փրոֆ. Սեդա Տատոյեան Գահիրէի Ազգ. Առաջնորդարանի Դահլիճին մէջ ելոյթի պահուն:

մասնակցած են իրենց տիրապետած վայրերուն եկեղեցիներու քանդումին եւ հոգեւորականներու արտաքսմանը:

Այս երկու շարժումներն ալ ունեցած են նաեւ քաղաքական գործունեութիւն:

Պաւլիկեան շարժումը գոյատեւած է մինչեւ 11-րդ դար:

Դասախօսութեան աւարտին ՀԲԸՄ-ի կողմէ տիար Պերճ Թերզեան շնորհակալութիւն յայտնեց յարգելի դասախօսուիին եւ հրաւիրեց ներկաները համադամներով լեցուն սեղանին շուրջ շարունակելու գրոյցը:

Տոքթ. Սեդա Տատոյեանի դասախօսութիւններու շարքը Նոր լիցք պարգեւեց մեր հասարակութեան ու Նոր մտորումներու առիթ ընծայեց մեզի, անջատելով մեզ մեր առօրեայէն, Մերձաւոր Արեւելքի պատմութեան քառուղիներով մեզ տանելով միջնադար եւ աւելի վաղ ժամանակներ:

Ա. Տօվլեթեան

**\*Տոքթ. Սեդա Պարսումեան Տատոյեան ծնած է Հալէպ. երկրորդական ուսումը ստացած է տեղւոյն Քառէն Եփփէ Ազ. ճեմարանին մէջ:**

1965-ին վկայուած է «Պէյրութի Համալսարանական Գոլէճ»էն, Պսակաւոր Արուեստից (BA) տիտղոսով, մասնա խտանալով Գեղարուեստից եւ փիլիսոփայութեան ծիւղերուն մէջ:

Թէզ՝ Եզնիկ Կողբացի: Չարութեան փիլիսոփայութիւնը:

1966-1967 Լոնտոնի City and Guilds եղարուեստից վարժարանին մէջ հետեւած է նկարչութեան եւ արձանա ործութեան դասընթացներու:

1969-ին ստացած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն Մա խտորուս Արուեստից տիտղոսը (MA), մասնա խտանալով փիլիսոփայութեան մէջ:

Թէզ՝ Դաւիթ Անյաղթ: Փիլիսոփայութեան սահմանումները:

1991-ին փիլիսոփայական խտութիւններու տոքթորականի (Ph.D) աստիճանին արժանացած է Նախարարներու Խորհուրդին կից, Մոսկուայի վկայութեան եւ Յանձնարարութեան Բարձրա ոյն Ժողովին կողմէ, Երեւանի Պետական Համալսարանին միջոցաւ:

Թէզ՝ Յովհաննէս Երզնկացի: Տեսութիւններ իսլամ փիլիսոփաներու յութիւններէն եւ փիլիսոփայական ճառերէն, իսլամական աղբիւրներու լոյսին տակ: (Պէյրութ)

1986-էն ի վեր մնայուն դասախօս է Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ:

Տոքթ. Սեդա Տատոյեան 1987-ին, Պէյրութի մէջ արժանացած է Հայկաշէն Ուզունեան հիմնադրամին սահմանած «Հայերէն Լաւա ոյն Գիրքի Հեղինակ» մրցանակին, իր հեղինակած «Էջեր Արեւմտահայ Մտածումէն» հատորին համար:

Ընտրուած է անդամ Միջ-կրօնական Ուսումնասիրութիւններու Արքայական Հիմնարկին, իր «Ֆաթիմեան Հայերը» - քաղաքական եւ մշակութային ազդեցութիւնները Մերձաւոր Արեւելքի մէջ, բացառիկ իրքին եւ հիմնարկին ակադեմիական ծրար իրին մէջ կատարած նշանաւոր ներդրումներուն համար:

1999-ին Տոքթ. Սեդա Տատոյեան պար եւատրուած է Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային կից, Հայկական Փիլիսոփայութեան Ակադեմիայի Բարձրա ոյն Մրցանակով՝ Դաւիթ Անյաղթի անուան մէտայլով եւ վկայա ղով:

Տոքթ. Տատոյեան անդամ է եւրոպական եւ ամերիկեան շարք մը մասնա խտական ընկերակցութիւններու:



# ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ՆՈՐՕԾ ԱՌԱՋՆՈՐԴ ԳՈՒՄԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳԱՅԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԳԱՅԻՐԷԻ ՄԵՋ



9 Մայիս 2004-ին Հալեպի մէջ եպիսկոպոս օծուած Արհիպապատիւ Ս. Գրիգոր Օգոստինոս Գուսանի առաջնորդական գահակալութեան արարողութիւնը տեղի ունեցաւ 20 Մայիս 2004-ի երեկոյեան ժամը 6.30-ին, Գահիրէի Հայ Կաթողիկէ Ս. Աւետման աթոռանիստ եկեղեցիին մէջ:

Եկեղեցւոյ դասին մէջ տեղ գրաւած էին Եգիպտոսի մէջ գործող քրիստոնեայ գանազան եկեղեցիներու ներկայացուցիչ՝ բարձրաստիճան եկեղեցականներ: Հայ Առաքելական եկեղեցին կը ներկայացներ Եգիպտահայ Թեմի Առաջնորդական Տեղապահ՝ Հոգեշնորհ Ս. Աշոտ վարդապետ Մնացականեան, իր կողքին ունենալով Հայր Տաճատ Աբեղայ Ծատուրեան եւ Հայր Գաբրիէլ Աբեղայ Սարգիսեան:

Հրաւիրեալ պաշտօնական հիւրեր եւ հաւատացեալներ լեցուցած էին եկեղեցին: Գահակալութեան ծեսին կը հանդիսապետէր Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ս. Ներսէս Պետրոս ԺԹ Կաթողիկոս - Պատրիարքը:

Ս. Գրիգոր Օգոստինոս եպիսկոպոս Գուսան մատուցեց Ս. Պատարագը որուն ընթացքին կատարուեցաւ գահակալութեան արարողութիւնը:

Ներսէս Պետրոս ԺԹ Կաթողիկոս - Պատրիարքին այս առթիւ տուած պատգամը կարդացուեցաւ հայերէն եւ արաբերէն լեզուներով, որուն մէջ ի միջի այլոց ան կ'ըսէ

«Մեծ ուրախութեամբ կ'ողջունենք ձեր մուտքը մեր եպիսկոպոսական դասին մէջ, որուն պիտի բերէք քահանայական քսաներէք տարուայ ձեր գործունեութեան փորձառութիւնը:

Տակաւին նորօծ քահանայ 1980-ին, սկսաք ձեր առաքելութիւնը որպէս ժողովրդապետ Հալեպի աթոռանիստ եկեղեցւոյ եւ ուսուցիչ քրիստոնեականի, մեր հայ կաթողիկէ վարժարաններուն մէջ: Ինչպէս նաեւ ստանձնեցիք Ռաքքայի եկեղեցւոյ ժողովրդապետի եւ անոր առընթեր դպրոցի տնօրէնի պաշտօնները եւ թեմի պարբերաբերթի պատասխանատուութիւնը: 1986-ին անուանուեցաք տնօրէն Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարանի եւ պատասխանատու միջեկեղեցական քրիստոնեականի կեդրոնին: 1989-ին անուանուեցաք դատախազ եկեղեցական ատեանի: 1990-էն սկսեալ, կատարեցիք եպիսկոպոսական փոխանորդի պաշտօնը: Չբաղեցաք նաեւ հոգեւոր կազմակերպութիւններով եւ եղաք պատասխանատու եպիսկոպոսական ընտանիքներու յանձնախումբին: 1993-էն ի վեր կը կատարէք Ս. Խաչ եկեղեցւոյ ժողովրդապետի պաշտօնը մինչեւ այսօր:

Հիմնուելով մեզի քաջ ծանօթ ձեր քահանայական անբասիր կեանքին, առաքելական եռանդին, անվերապահ նուիրումին եւ երկար տարիներու ճոխ փորձառութեան, վստահ ենք որ Աղեքսանդրիոյ Թեմի պատուական կղերը, առաքինազարդ քոյրերը ինչպէս նաեւ մեր սիրելի հաւատացեալները պիտի գտնեն ձեր մէջ «քաջ հովիւը, որ իր կեանքը կու տայ ոչխարներուն համար»:

Ապա՝ նոյն լեզուներով եւ յուզմունքով իր ուխտը կատարեց նորօծ Գուսան եպիսկոպոս:

Արարողութեան աւարտին Ներսէս Պետրոս ԺԹ Կաթողիկոս - Պատրիարքն ու Աղեքսանդրիոյ կաթողիկէ հայոց Առաջնորդ Գուսան եպիսկոպոսը, եկեղեցիին կից սրահին մէջ ընդունեցին ներկայ պաշտօնական հիւրերուն եւ հաւատացեալներուն շնորհաւորութիւնները:

«Տեղեկատու»ն եւս կը շնորհաւորէ հայ կաթողիկէ նոր Առաջնորդը եւ յաջողութիւն կը մաղթէ իրեն, իր ստանձնած նոր պաշտօնին մէջ:

«Տ.»



ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի ատենապետ տիար Օննիկ Պլըքտանեան կը շնորհաւորէ Հայ Կաթողիկէ նորօծ Առաջնորդ Գուսան եպիսկոպոսը:





# Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐԸ ԵՒ ԵԳԻՊՏԱՅԱՅ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Յուլիս 3, 2004-ին Գահիրեի օդակայանը խճողաժ էր Գահիրեի եւ Ադեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի մարզիկներուն ծնողներով, բարեկամներով ու վարչականներով, որոնք համախմբուած էին մարզիկները բարեմաղթութիւններով ճանապարհելու դէպի Պուլկարիա, ուր տեղի պիտի ունենային ՀԲԸՄ-ի թեան 17-րդ Նաւասարդեան խաղերը:

Եգիպտոսի 41 հոգիոց պատուիրակութիւնը, բաղկացած 34 մարզիկներէ, 3 մարզիչներէ եւ 4 պատասխանատուներէ, 6 օր պիտի ապրէր Բարեգործականի դրօշին ներքեւ ու իր մասնակցութիւնը պիտի բերէր Միութեան 17-րդ Նաւասարդեան խաղերուն:

Սոֆիայի ՀԲԸՄ-ի մասնաճիւղը, որ ստանձնած էր սոյն մրցաշարքին կազմակերպութիւնը, Վառնայէն 30 քմ. հեռու, Ալպենա զբօսաշրջիկային ուստանը յարմարագոյն վայրը նկատած էր բարձրորակ եւ յաշոյ մրցաշարքեր ապահովելու համար:

Նաւասարդեան խաղերը, Յունական Ողիմպիական խաղերուն նման, նախաքրիստոնէական ծնունդ ունին: Այս համաժողովրդական մրցոյթները Հայաստանի մէջ տեղի կ'ունենային հայկական հին տոմարին նոր տարուայ սկիզբը:

Մեծ ժողովրդականութիւն վայելած այս տօնահանդէսը՝ Զրիստոնէութեան շրջանին հեթանոսական խորհրդանշան նկատուելով արգիւնեցաւ:

20-րդ դարու կէսէն սկսեալ, ՀԲԸՄ-ը պայծառ գաղափարը ունեցաւ վերակենդանացնելու Նաւասարդեան խաղերը, պատեհ առիթ ստեղծելու որ նոր կապեր հաստատուին տարբեր գաղութներու երիտասարդներուն միջեւ:

Եւ այսպէս, երկու տարին անգամ մը, ՀԲԸՄ-ի Նաւասարդեան խաղերը կը կազմակերպուին երկրագունդի հայաշատ օճախներէն մէկուն մէջ, ուր երիտասարդները մարզական բարձր ոգիով կը մրցին իրարու հետ, կը միաձուլուին հայկական ոգիով ու կը դառնան մէկ բռունցք:

ՀԲԸՄ-ի 2004-ի 17-րդ Նաւասարդեան խաղերուն մասնակցող երկիրներուն մէջ, Եգիպտոսի պատուիրակութիւնը ամենաբազմանդամն էր: Ան խաղերուն մասնակցեցաւ հինգ խումբերով:

ՀԲԸՄ-ի 17-րդ Նաւասարդեան խաղերը սկիզբէն մինչեւ վերջ լաւ կազմակերպուած էին: Պատասխանատուները Վառնայի օդակայանը կը սպասէին տարբեր երկիրներէ հասնող պատուիրակութիւնները, դիմաւորելու, տեղաւորելու զբօսաշրջիկային հանրաշարժերու (buses) մէջ եւ փոխադրելու Ալպէնա:

Եգիպտահայերս տեղաւորուեցանք մէկ հանրաշարժի մէջ եւ 45 վայրկեան ճանապարհ կտրելէ ետք հասանք Ալպենա, որ զբօսաշրջիկներու դրախտ կը նկատուի, իր ճերմակ ու մաքուր ակազէ ծովափով, խնամուած մարգագետիններով ու անտառներով, 40-է աւելի պանդոկներով, ճաշարաններով, շուկաներով, զուարճութեան յատուկ կէդրոններով, մաքուր փողոցներով եւ մանաւանդ՝ ապականութիւնէ զերծ բուրումնաւետ օդով:

Սոյն մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերէին Աւստրիայէն, Արժանթինէն, Հայաստանէն, Իտալիայէն, Կիպրոսէն, Ֆրանսայէն, Լիբանանէն, Սուրիայէն, Եգիպտոսէն եւ անշուշտ Պուլկարիայէն պատուիրակութիւններ:

Մրցաշարքին ներկայ չէին Միացեալ Նահանգներու, Գանատայի եւ Անգլիոյ պատուիրակութիւնները, որոնց բացակայութեան բուն պատճառը անհասկնալի մնաց զանազան տարածայնութիւններու մէջ:

Յարմար կարգադրութեամբ մը, բոլոր մասնակցող խումբերը, իրար բաւական մօտ, մարզադաշտերուն կից, երկու շքեղ պանդոկներու մէջ տեղաւորուած էին: ՀԲԸՄ-ի Վարչութիւնը եւս ժամանակաւոր գրասենեակներ վարձած էր պանդոկներէն մէկուն մէջ, ուր օրուայ բոլոր ժամերուն օժանդակ անդամներ կը գտնուէին, հիւրերուն պէտք եղած աջակցութիւնը տալու:

Կիրակի 4 Յուլիսի երեկոյեան ժամը 6.00-ին տեղի ունեցաւ մրցաշարքին հանդիսաւոր բացումը, Ալպենայի կէդրոնական մարգագետինին վրայ, ուր բոլոր մարզիկները հագած իրենց յատուկ համագագեսները, տողանցեցին ծածանելով իրենց երկրորդ հայրենիքներուն դրօշակները: Ողջոյնի ու բարի գալուստի խօսքերէ ետք երգուեցաւ «Արծիւ Կարօ» քայլերգը, որ յատկապէս յօրինուած էր այս մրցաշարքին համար:

Ինչպէս յիշուած էր մրցաշարքի յայտագրին մէջ, այդ գիշեր «Հայկական Գիշեր» էր: Բոլոր հիւրերը ուղղուեցան դէպի Casino կոչուած ճաշարանը, ուր պուլկարահայ սիրուած երգիչ Արթուր Նատօսեան երեկոն խանդավառեց հայկական շուրջպարերով:

Շուրջս կը դիտէի զարմանքով. ամէն կողմ հայերէն կը խօսուէր, անշուշտ՝ տարբեր շէշտերով ու աղաւաղումներով, սակայն բոլորն ալ ճիգ կը թափէին մայրենի լեզուն գործածելու:

Մեծ գոհանակութեամբ նկատեցի որ պուլկարահայերը կրցած են պահել իրենց լեզուն, հակառակ որ 1944-1989-ի համայնալարութեան շրջանին, կառավարութիւնը ճնշում բանեցուցած էր հայկա-



կան դպրոցներուն ու եկեղեցիներուն վրայ եւ ստիպած՝ որ անոնցմէ շատերը փակուին: Կուսակցութիւնները, մշակութային, մարզական ու բարեսիրական միութիւններու գործունէութիւնը ապօրինի նկատուած էր: Սակայն, ահաւասիկ 45 տարի դադարէ մը ետք, 1989-ին ՀԲԸՄիութիւնը նոր ուժով ու եռանդով անցած է գործի Պուկարիոյ մէջ: 15-16 հազար հաշուող պուկարահայերուն թիւը վերջին տարիներու ընթացքին աւելցած է: Մօտ 25 հազար հայեր, հեռանալով հայրենիքէն, եկած են աւելի նպաստաւոր կեանքի պայմաններ փնտռելու Պուկարիոյ մէջ:

Երկուշաբթի, 5 Յուլիսի սկսան մրցումները, որոնք առաւօտեան ժամը 9.00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7.00 կը տեւէին: Առաջին օրը, Ռուբէն Սիմոնեան մի քանի մրցումներ խաղալէ ետք, երկրորդ հանդիսացաւ բիսկ - բոնկի մրցաշարքին մէջ ու ապահովեց եգիպտահայերուն առաջին արծաթեայ մետալը, իսկ Ռուբէն Սիմոնեան ու Կարօ Վարժապետեան զոյգը, զտումներէ ետք 3-րդ հանդիսացան:

Երեկոյեան 7.00-ին Գահիրէի Ֆութպոլի խումբը իր առաջին մրցումը խաղաց Պուկարիոյ Շումէն քաղաքի խումբին դէմ եւ յաղթեց 3-0 արդիւնքով:

Գիշերուայ խնջոյքը Bulgarian Fiesta կը կոչուէր: Այս զուտ պուկարական ճաշարանին մէջ զուարճացանք պուկարական եւ եւրոպական պարերով ու երգերով:

Երեքշաբթի, 6 Յուլիսի ժամը 12.15-ին բոլոր եգիպտահայերս մարզադաշտ գացինք, քաջալերելու համար Աղեքսանդրիոյ պասքէթպոլի խումբը, որ պիտի խաղար Վիեննայի Արարատ խումբին դէմ: Յաղթական հանդիսացաւ Վիեննայի խումբը:

Ժամը 1.30-ին Գահիրէի պասքէթպոլի խումբը խաղաց Հալէպի ՀԵԸ-ի խումբին դէմ ու ան եւս պարտուեցաւ:

Օրուան տրամադրութիւնը պետք էր որ ազդեր մեր աղջիկներուն վրայ, եւ իրապէս ալ, մեր աղջիկները որոնք Գահիրէէն իսկ որոշած էին մրցաշարքի բաժակին տիրանալ, յաղթելու վճռականութեամբ իջան դաշտ ու յաղթեցին Վիեննայի Արարատ խումբին 50-17: Նոյն ժամանակ, Գահիրէի ֆութպոլի խումբը խաղաց Հայաստանի խումբին դէմ եւ 4-1 արդիւնքով յաղթական հանդիսացաւ:

Այդ գիշերուայ երեկոյթը կը կոչուէր International Music: Բոլոր հիւրերը ուղղուեցան Caribi բացօթեայ ճաշարանը վայելելու համար Արեւելեան, Լատին Ամերիկեան եւ Հայկական ճոխ երգացանկ մը, ծաւօթ երգիչներու կատարմամբ:

Տարբեր երկիրներու մարզիկները սկսած էին ծաւօթանալ ու մտերմանալ իրարու հետ: Ամէն կողմ կը տեսնէինք խումբ - խումբ տղաք ու աղջիկներ, որոնք կը լուսանկարուէին կամ հասցէի ու հեռաձայնի թիւ կը փոխանակէին: Իսկ մենք, պատասխանատուներս՝ տեղեկութիւններ կը փոխանակէինք մեր

գաղութներու մարզական ու մշակութային գործունէութիւններուն մասին:

Չորեքշաբթի, 7 Յուլիսի առաւօտեան 11.00-ին Գահիրէի տղոց պասքէթպոլի խումբը խաղաց Շումէն խումբին դէմ: Մրցումը վերջացաւ ի նպաստ վերջինին: Ապա, խումբը խաղաց Պէյրութի Անդրանիկ խումբին դէմ ու արդիւնքը եղաւ ի նպաստ Անդրանիկին:

Տրուած ըլլալով որ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներու խումբէն զատ միայն Վիեննայի աղջիկներու խումբը ներկայացած էր մրցաշարքին, Վիեննայի պատասխանատուն խնդրած էր որ խումբերը գէթ երկու անգամ խաղային փոխանակ մէկի: Ուստի ժամը 4.00-ին, մեր աղջիկները կրկին հանդիպեցան Վիեննայի աղջիկներուն հետ եւ շատ լաւ խաղարկութիւն մը ցուցաբերելէ ետք, յաղթեցին 75-16 արդիւնքով:

Ֆութպոլի մեր խումբին համար կարեւոր օր էր այսօր քանի որ պիտի խաղային Արժանթինի խումբին դէմ: Մրցումը վերջացաւ 0-0 արդիւնքով որը նպաստաւոր նկատուեցաւ Գահիրէի խումբին համար:

Այդ օրուայ երեկոն բաւական խանդավառ էր քանի որ հունգարական ու ցիկան նուագախումբեր փոխն ի փոխ կը շիկացնէին մթնոլորտը:

Հինգշաբթի, 8 Յուլիսի Գահիրէի պասքէթպոլի խումբը պիտի խաղար Պուկարիոյ Ռուսէ (Rousse) քաղաքի խումբին դէմ: Տրուած ըլլալով որ երկու խումբերն ալ նախորդ բոլոր մրցումներուն պարտուած էին, համաձայնեցան չխաղալ:

Նոյն օրը ֆութպոլի խումբը 2 մրցում ուներ: Մէկը՝ Վառնա II-ի դէմ, որ վերջացաւ ի նպաստ Գահիրէի 3-1 արդիւնքով, իսկ միւսը՝ Ռուսէի (Rousse) դէմ, դարձեալ՝ ի նպաստ Գահիրէի 3-0:

Մեր ֆութպոլիստները իրենց ցուցաբերած մարզական լաւ խաղով եւ ոգիով գնահատանքի արժանի եղան բոլորին կողմէ:

Գալով Աղեքսանդրիոյ պասքէթպոլի խումբին, Հինգշաբթի կէսօրէ ետք, խումբը մրցեցաւ Բլովդիլ քաղաքի խումբին հետ եւ յաղթական հանդիսացաւ:

Հինգշաբթի 8 Յուլիսը իր աւարտին հասաւ Jazz Night-ով:

Ուրբաթ 9 Յուլիսը ճակատագրական օր էր Գահիրէի ֆութպոլի խումբին համար: Ան իր աւարտական մրցումը պիտի խաղար Կիպրոսի խումբին դէմ: Մրցումը սկսաւ ու շարունակուեցաւ պրկուած ջիղերով: Մէկ խումբին սխալը պիտի ապահովէր միւսին յաղթանակը: Մրցումին բուն ժամանակը աւարտեցաւ 0-0 արդիւնքով, որուն համար դիմեցին հատուցման հարուածներու (penalty), որոշելու համար յաղթական խումբը:

Բաւական սիրտհատնումէ ետք մեր տղաքը յաղթեցին 4-3ով եւ հասան ֆութպոլի առաջնութեան:



Ժամը 5.00-ին փակման արարողութիւնը տեղի ունեցաւ ծածկուած մարգադաշտին վրայ: Կրկին մարզիկները տողանցեցին: ԶԲԸՄ-ի Վարչութիւնը կրկին յայտագիր մը պատրաստած էր: Գործօն անդամ Օր. Մերի Զէլէճեան վարեց հանդիսութիւնը եւ շնորհաւորեց յաղթական խումբերը: Յայտագրին ընթացքին Վառնայի հայկական պարի խումբին աղջիկները երկու պարեր ներկայացուցին:

Աւարտին, բոլոր յաղթական մարզիկները հերթաբար կը շարուէին պատուանդանին վրայ ու տասնեակ մը լուսանկարողներ, նոյնիսկ տարբեր գաղութներէ, գործի անցած էին յաւերժացնելու համար այս հպարտալի վայրկեանները:

Ամփոփելով եզրափակող գաղութի արդիւնքները ընդհանուր դասաւորման մէջ նշենք:

Ռուբէն Սիմոնեան երկրորդ հանդիսացաւ բինկ - բոնկի մրցաշարքին մէջ:

Ռուբէն Սիմոնեան եւ Կարօ Վարժապետեան 3-րդ հանդիսացան բինկ - բոնկի զոյգերու մրցումին մէջ:

Գահիրէի ԶՍԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներու պասքէթպոլի խումբը առաջին հանդիսացաւ:

Գահիրէի ԶՍԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց ֆութպոլի խումբը մրցաշարքին առաջին հանդիսացաւ:

Եզրափակող գաղութը երրորդ հանդիսացաւ առաւելագոյն բաժակներու արժանացած երկիրներուն մէջ:

Վերջին գիշերուան պարահանդէսը տեղի ունեցաւ Casino ճաշարանին մէջ ուր Պուլկարիոյ հայոց Առաջնորդ Տիրայր Արքեպիսկոպոս Մարտիկեան, խօսք առնելով ըսաւ, թէ 17-րդ Նաւասարդեան խաղերը վերջ գտած են եւ պնդեց որ անմիջապէս պէտք է գործի անցնիլ 18-րդը կազմակերպելու համար: Ան խնդրեց աշխատանքները չձգել վերջին ամիսներուն: Ապա շնորհակալութիւն յայտնեց Պուլկարիոյ կառավարութեան որ խաղող անկիւն մը տրամադրած էր հայերուն, կայացնելու 17-րդ Նաւասարդեան խաղերը: Խօսք առաւ ԶԲԸՄ-ի Երիտասարդական Կեդրոնական Մարմնի ատենապետ՝ Պր. Զրանդ Պարտաքճեան, որ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց որոնք սատարեցին այս մրցաշարքին յաջողութեան եւ ըսաւ, թէ այս մրցաշարքը առիթ մը եղաւ բարեկամական կապեր ստեղծելու ԶԲԸՄ-ի մեծ ընտանիքին ցրուած անդամներուն միջեւ ի շահ Միութեան, Սփիւռքին եւ Զայրենիքին:

ԶԲԸՄ- Սոֆիայի մասնաճիւղի ատենապետուհին, շնորհալի Տիկին Սոնիա Պետրոսեան, խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց ԶԲԸՄ-ի բոլոր անդամներուն որոնք ճիգ չխնայեցին այս մրցաշարքը յաջողցնելու համար, ըլլան անոնք կազմակերպողներ թէ մարզիկներ:

Եթէ ինծի ալ խօսք առնելու առիթը տրուէր, նախ իմ խորին հիացմունքս պիտի յայտնէի այս մրցաշարքին անթերի կազմակերպութեան համար,

եզրափակող խումբերու բոլոր մարզիկներուն կողմէ շնորհակալութիւն պիտի յայտնէի ԶԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան (Նիւ Եորք), ԶԲԸՄ Միութեան Գահիրէի Մասնաճիւղի Վարչութեան եւ ատենապետին՝ Պր. Օննիկ Պլըքտանեանին, որոնց բարոյական անսակարկ օժանդակութեան եւ Սաթենիկ Ճ. Զազըր ֆոնտին ընձեռած նիւթական կարելիութիւններուն շնորհիւ կարողացանք մասնակցիլ այս մըրցաշարքին, շփուիլ Սփիւռքի այլ գաղութներու ԶԲԸՄ-ի անդամներուն հետ եւ անմոռանալի օրեր անցնել Ալպենայի մէջ:

Յատուկ շնորհակալական խօսք պիտի յայտնէի Գահիրէի ԶՍԸՄ ՆՈՒՊԱՐԻ Վարչութեան որ միշտ կը քաջալերէ ակումբին մարզական բոլոր խումբերը եւ առաջնակարգ մարզիչներով կ'օժտէ զանոնք:

Երկար ամիսներէ ի վեր սպասուած մրցաշարքը հասաւ իր աւարտին: Շաբաթ, 10 Յուլիսը ամբողջութեամբ տրամադրուած էր Գահիրէ վերադառնալու: Երբ կէս գիշերէն ետք յաղթական հայեացքով ու հպարտ քայլերով, մեր ստացած մետալներով զարդարուած ու բաժակները շալկած դուրս ելանք Գահիրէի մաքսատունէն, նոյն սիրելի դէմքերն էին որ այս անգամ անհուն ուրախութեամբ դիմաւորելու եկած էին մեզի:

Գահիրէի ԶՍԸՄ ՆՈՒՊԱՐԻ համար Կիրակի, 11 Յուլիսը տօնական երեկոյ մըն էր: Ամրան եղանակի բացման ճաշկերոյթը աւելի փայլք մը ստացած էր: ԶՍԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներու պասքէթպոլի խումբին, ԶՍԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց ֆութպոլի եւ բինկ - բոնկի խումբերուն ստացած բաժակները կը շողողային պատուոյ սեղանին վրայ:

Գահիրէի ԶՍԸՄ ՆՈՒՊԱՐԻ փոխ ատենապետ Տոքթ. Ճորճ Սիմոնեան ելոյթ ունենալով շնորհաւորեց յաղթական խումբերը իրենց ձեռք ձգած յաջողութեան համար եւ շնորհակալութիւն յայտնեց ԶԲԸՄ-ի 17-րդ Նաւասարդեան խաղերուն յաջողութեան սատարողներուն: Ապա, մի առ մի հրաւիրեց մարզիկները բաժակներով եւ մետալներով լեցուն սեղանին մօտ:

Ներկայ հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով իր գնահատանքը յայտնեց մեր մարզիկներուն, որոնք միաբերան երգեցին ԶԲԸՄ-ի 17-րդ Նաւասարդեան խաղերուն առթիւ գրուած «Արծիւ Կարօ» քայլերգը:

Երեկոն շարունակուեցաւ ուրախ մթնոլորտի մը մէջ:

Յոտեսութիւն մինչեւ ԶԲԸՄ-ի Նաւասարդեան 18-րդ խաղերը, 2006-ին:

Սօսի Յակոբեան



# Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ 2004 -ի 17-ՐԴ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԽՈՒՄԲԵՐԸ



Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքեթպոլի աղջիկներու խումբը՝

Մարլին Սիմոնեան  
Լորա Խանճեան  
Մարալ Յակոբեան  
Մարալ Պալաեան  
Դանիա Արթինեան  
Թալին Գալիշեան  
Անայիս Միքայելեան  
Նայիրի Յակոբեան

Խումբի մարզիչ՝  
Չաքարիյա Մուսիյ էլ Տին  
Պատասխանատուներ՝  
Ժիրայր Եւ Սոսի Յակոբեան:



Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքեթպոլի տղոց խումբը՝

Յակոբ Գարակեօզեան  
Կարեն Թուլումպաճեան  
Կարո Վարժապետեան  
Մայք Մորսի  
Սթիվ Սիմոնեան  
Կարեն Յակոբեան  
Սիմոն Տեփոյեան  
Արփեն Գարգուր  
Հրազդան Գալիսեան


Խումբի մարզիչ՝ Սամի Լապիպ  
Խումբի պատասխանատու՝ Տոքթ.  
Գեորգ Երզնկացեան որ միեւնոյն  
ժամանակ Եգիպտոսի պատուիրա-  
կութեան ընդհանուր ղեկավարն  
էր:



Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ֆութպոլի տղոց խումբը՝

Ռուբեն Սիմոնեան  
Եաննի Կրեկուար  
Այգ Չաքարեան  
Լեւոն Ֆրունճեան  
Յակոբ Յակոբեան  
Գիգո Պուապճեան  
Արէն Նազաշեան  
Կարո Վարժապետեան  
Սիմոն Տեփոյեան

Խումբի մարզիչ՝  
Զաքթեն Տօրրի Ապտ էլ Սալամ  
Խումբի պատասխանատու՝  
Կարո Վարժապետեան



Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ բինկ - բոնկի խումբը՝ մասնակիցներ:

Ռուբեն Սիմոնեան  
Կարո Վարժապետեան  
Կարեն Թուլումպաճեան

Խումբի պատասխանատու՝  
Ռուբեն Սիմոնեան



Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքեթպոլի տղոց խումբը՝

Կարո Թօսունեան  
Հրանդ Վարժապետեան  
Յակոբ Կորտեան  
Սերժ Կորտեան  
Արթօ Թօսունեան  
Այգ Գալայնեան  
Սագօ Տեր Արսէնեան  
Կարի Խանճեան  
Անտրէ Իսքանտար  
Վահէ Արթինեան

Խումբին պատասխանատուն էր  
Տոքթ. Արթօ Արթինեան:



# ԹՈՂ ԼՈՅՍ ՍՓՈՒ ԿԱՃԱՌՆ ԱՅՍ ԼՈՒՍԱՇՈՂ

Համալսարանական ուսման տարիներու վերջին հանգրուանն է: Որքան ալ տարօրինակ կը թուի ըլլալ, այս տարիներն ալ անցան արագօրէն, Մելգոնեանի մէջ տոյնքան եւ աւելի արագ անցած մեր տարիներուն պէս:

Տակաւին յիշողութեանս մէջ թարմ են ու կ'ապրին այն օրերը, երբ մեր վարժարանի շրջափակէն ներս, պատմութիւն շնչացող այդ ծառերուն տակ նստած, կը փորձէինք ուրուագծել մեր ապագան: Դասընկերներով հաւաքուած կը մտածէինք թէ ո՞ր ասպարեզին կամ մասնագիտութեան կրկանք յարմարիլ կամ հետեւիլ, թէ ո՞ր համալսարանը պիտի յաճախէինք եւ ե՞րբ պիտի դարձեալ քով քովի գալիսք մեր ՏԱՆ շրջափակին մէջ: Հինգ տարի անցաւ այդ օրերէն ի վեր ... գրեթէ ամէն ինչ փոխուած է:

Հիմա այլեւս չենք հաւաքուած ծառի մը տակ: Ինչպէս եկած էինք տարբեր քաղաքներէ, այդպէս ալ վերադարձանք, եւ ուր որ ալ գացինք, դարձեալ վերադարձած եղանք օտարութեան գիրկը: Սակայն մեր հետ առինք կեանքի յիշողութիւնները, դպրոցական լաւագոյն տարիներու յիշատակները, մեր «ապրուած օրերը»: Այո՛, իսկապէս ապրուած ... մանաւանդ, երբ շատ յաճախ, չըսելու համար օրական, կը ստանանք զանազան նամակներ, որոնք կը վերաբերին մեր հաստատութեան ճակատագրին:

Ինչ տարօրինակ, երբ գրեթէ ութսուն տարի շարունակ կանգուն եւ կենսունակ մնացած մեր այս պապենական տունը կ'ենթարկուի նոր փորձութիւններու ... Այսպիսի վարժարան մը ուրիշ տեղ կարելի չէ հիմնել: Ան այսքան տարիներ շարունակ իր առաքելութեան կը ծառայէ, որովհետեւ հիմնուած է նպատակի մը համար, աշխարհագրական նպաստաւոր դիրքի մը վրայ եւ ճիշդ ատենին:

Այս ճակատագրական ժամանակաշրջանին, երբ ողջ աշխարհը կը գտնուի միջազգայնացման ճակատէրուն մէջ, երբ պատմականօրէն անցեալ ունեցող իւրաքանչիւր ազգ կը շնայ իր ազգային արժէքներուն եւ արմատներուն, մշակոյթին եւ պատկանելիութեան կառչած մնալ, որոնք կը նմանին իրենց դիմագիծը աստիճանաբար կորսնցուցած շուքերու, մենք մեր ձեռքով կը բանանք մեր տան դռները եւ կ'ընդունինք այդ գորշ ծուխը, որ պատրաստ է կուլ տալու մանաւանդ թիւով փոքրաթիւ ժողովուրդները:

Մելգոնեան Կրթական Հաստատութեան դերը հիմա, աւելի քան երբեք, շատ աւելի կարեւոր է: Մեր ամահանուն Բարերարները, մեր վրէժը լուծելու եւ իրենց հօրենական տունը վերստին շինել փորձող սերունդ մը՝ մեր մեծերը հո՛ս պատրաստելու նպատակով հիմնեցին, պահեցին եւ ապա հաւատքով ու համոզումով զայն վստահեցան եւ կտակեցին ՀԲԸ-Միութեան:

Այո, ունեցանք բազմաթիւ շրջանաւարտներ ու նաեւ թերաւարտներ, որոնց մասին կը խօսինք հպարտութեամբ, որոնք կրցան իրենց նախընտրած ասպարեզներուն մէջ յաջողիլ, նուիրուիլ ազգային կեանքին, ամբողջութեամբ ծառայել թէ՛ սփիւռքին եւ թէ՛ հայրենիքին: Անոնք հայեցի ուսում ու դաստիարակութիւն ստացան յատկապէս ա՛յս վարժարանին մէջ, որ շուրջ եօթանասուն տարիներ շարունակ կը գործէ եւ կը բանի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անխոնջ հոգածութեան եւ հովանիին տակ, գուրգուրալից ձեռնհասութեամբ ...

Մեր գոյութեան ամբողջ ընթացքին, պատմական եւ ճակատագրական պահերուն, շատ յաճախ, երբեմն մեր անտարբերութեան, երբեմն մեր լռութեան ու երբեմն ալ կամայ թէ ակամայ սխալներուն պատճառով, պատուհաս եւ չարիք եղած ենք ուրիշներէ աւելի, խոշոր վնասներ եւ կորուստներ արձանագրած ենք մեր անցած ճամբաներուն վրայ:

Ինչո՞ւ անգամ մը եւս զօրաշարժի չենթարկենք մեր ազգային եւ հաւաքական բոլոր ճիգերը, եւ ի գին մարդկային ու նիւթական զոհողութիւններու, ճիգ մը եւս չընենք փրկելու, վերապրեցնելու համար այս հաստատութիւնը, իբրեւ միակ եւ իւրայատուկ լուսաշող կաճառ: Կ'ուզենք հաւատալ եւ համոզուած ենք, որ, ինչպէս հեռու եւ մօտիկ անցելին, միայն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը կրնայ եւ ատակ է զայն բաց եւ բանուկ պահելու: Կասկածէ վեր է թէ Միութեան բոլոր՝ պատասխանատուները, առանձնաբար, միասնաբար եւ հաւաքաբար կը գիտակցին, որ եթէ անգամ մը գոցուի, այլեւս երբեք պիտի չբացուի այս հաստատութիւնը: Եւ Աստուած մի արասցէ որ ...

«Մելգոնեանցի ըլլալը չի բացատրուիր, այլ կ'ապրուի միայն», թերեւս այս բառերով մեզմէ շատեր չեն կրնար բացատրել իրենց զգացումները, երբ այս դժնդակ օրերուն կը խօսին Մելգոնեանը փակելու որոշումին մասին: Եւ երբ հեռաձայնի վրայ հարցուցի սիրելի ուսուցիչիս, թէ ի՞նչ է Մելգոնեանի ներկայ վիճակը, ան պատասխանեց. «... քանի մտահոգ ես, բան մը գրէ եւ դրկէ»:

Շատ փորձեցի մտածումներս թուղթին յանձնել ամբողջ տարուան ընթացքին, բայց անոնք չեն բացատրուիր, այլ կ'ապրուին միայն ...

Կակաչ, 1999 թ. շրջանաւարտ

«Հայացք»ի հիմնադիր փոխ – խմբագիր



## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

### ԿԱՐԱՊԵՏ ՏԱՔԵՍԵԱՆԻ, ՎԻՈԼԷԹ ԹԱՇՃԵԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՐՓԻ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ ՀԵՏ

**Հ.- Որպես փորձառու ուսուցիչ, ի՞նչ է Ձեր կարծիքը Մել ղոնեանի գիշերօթիկ բաժինը ողելու մասին եւ ի՞նչ հետեւանքներ կրնայ այս որոշումը ունենալ յետա-ային:**

Կարապետ Տաքեւեան (ուսումնաւար, հայերէն բաժնի պատասխանատու, Հաստատութեան մէջ կը պաշտօնավարէ 1996 թ. Սեպտեմբերէն).



Պ.- Գիշերօթիկի բացակայութեան, Մելգոնեանը կը կորսնցնէ իր ինքնութիւնը: Գիշերօթիկը այն վայրն է, ուր կը կերտուի աշակերտին անձնաւորութիւնը:

Վիոլէթ Թաշճեան (1983 թ. ամարտած է ՄԿ Հաստատութիւնը, 1988-ին՝ Երեւանի Պետական Համալսարանի բանասիրական բաժինը: Նոյն թուականէն սկսած է պաշտօնավարել Մելգոնեանի մէջ, իբրեւ հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցչուհի եւ դաստիարակ).



Պ.- Տեղասպանութենէն ետք, Մելգոնեան անմահանուն Բարերարները կառուցեցին այս կրթօճախը՝ աշխարհասփիւռ հայ պարման-պարմանուհիներուն համար: Հաւատացին, որ անոնք պիտի ըլլան ողնասիւնը վերածնունդ ապրող մեր ժողովուրդին: Վերջին տասնամեակներուն հայ իրականութիւնը նոր մարտահրաւերներու դիմաց դրաւ կրթարանը: Անգամ մը եւս հաստատուեցա՛ւ Բարերարներուն տեսիլքին անժամանցելիութիւնը տարբեր գիրով ընդգծելու համար: Մեր ժողովուրդին իրական պատկերը այստեղ ստեղծուեցաւ ու կը ստեղծուի: Կիպրահայ, յունահայ, պուլկարահայ, սուրիահայ, պարսկահայ, լիբանանահայ, հայաստանացի եւ արցախցի ... միասնաբար կը կատարեն կրթական ուղեւորութիւն՝ դէպի մարդկային ու ազգային արժէքներ, հայ գրականութիւն ու պատմական անցեալ, հայրենիք ու ներկայ իրավիճակ եւ վերջապէս սփիւռքեան բարդ ու բազմալար իրականութիւն: Այստեղ է, որ անոնց ներաշխարհին մէջ, ծննդավայրի կողքին կը բարձրանայ դէռ

չտեսած հայրենիքը, իսկ հայրենիքի կողքին՝ սփիւռքի ներկայութիւնը: Տարբեր երկիրներէ Մելգոնեան եկող հայ պատանիին ներկայութիւնը կը մարմնաւորէ մաս մը մեր հայ իրականութենէն. իսկ հո՛ս իրենց մէջ կը ստեղծուի իրականութիւնը ա՛յն ամբողջութեան որուն գիտակցութիւնը այնքա՛ն կարեւոր է այսօր մեր ժողովուրդին համար, հայրենիքի մէջ թէ սփիւռքի:

Մելգոնեանին այս նուաճումը մեր ազգային գոյապայքարին ի նպաստ ներդրում է: Ինչպե՛ս կարելի է խափանել ...:

Հայարփի Տեմիրճեան (1971 թ. ամարտած է ՄԿ Հաստատութեան գիտական ճիւղը, 1978ին՝ Երեւանի Պետական Համալսարանի պատմութեան եւ հնագիտութեան բաժինը: 1981-1996 թթ. Մելգոնեանի մէջ դասաւանդած է ընդհանուր եւ Հայաստանի աշխարհագրութիւն, ընդհանուր եւ հայոց պատմութիւն, առտնին տնտեսագիտութիւն, կար ու ձեւ. իսկ 1996էն Դիւանի անդամ է):



Պ.- Որպէս նախկին Մելգոնեանցի եւ ներկայիս Մելգոնեանի մէջ պաշտօնավարող անձ, պէտք է յիշենք, որ Մելգոնեանի գիշերօթիկ բաժինը եղած է ողնասիւնը այս դպրոցին՝ առանց անոր անկմաստ է Հաստատութեան գոյութիւնը: 21րդ դարու քաղաքական եւ տնտեսական փոթորկոտ պայմաններուն տակ, Մելգոնեանի գիշերօթիկը ապաստարան է հայորդիներու համար, որոնք կեանքի փողոցներուն մէջ կրնան կորսուիլ ...

**Հ.- Ի՞նչ է Ձեր կարծիքը առնուած որոշումին եւ տրուած պատճառաբանութիւններուն մասին:**

Կարապետ Տաքեւեան

Պ.- Մելգոնեանի հնարաւորութիւնները առաւել արդիւնաբեր օգտագործել՝ անհրաժեշտութիւն մըն էր: Այս ուղղութեամբ կատարուելիք իւրաքանչիւր քայլ կը պահանջէր բազմակողմանի քննարկում:

Վիոլէթ Թաշճեան

Պ.- Տրուած պատճառաբանութիւններէն յստակ ու համոզիչ բան հասկնալ կարելի՞ է. չեմ գիտեր:



Որոշումը եւ անոր բնույթը անսպասելի ու խիստ վրդովեցուցիչ են: Ժամանակակից հայ իրականութեան մէջ անգամ մը եւս եւ ահագանգի պէս կը հնչեն հայկական վարժարաններուն զանգերը: Անոնց շուրջ միասնաբար պէտք է կեդրոնացնենք մեր ուշադրութիւնը՝ յանուն ներկայ ու գալիք հայ պարման-պարմանուհիներուն:

**Հայարփի ՏԵՄԻՐՃԵԱՆ**

Պ.- Կրթութիւնը ապրելակերպ դարձած է մարդու կեանքին մէջ, եւ ոչ թէ շռայլութիւն, ինչպիսին էր Մելգոնեանը նոր հիմնադրուած ժամանակ: Մելգոնեանը գոցելու որոշումը արդէն յստակօրէն յայտնի է, որ հիմնուած է գլխաւորապէս տնտեսական պատճառներու վրայ:

**Հ.- Ի՞նչ կրնաք ըսել այս տարի իշերօթիկ աշակերտներուն կանուխ տուն վերադառնալու առնչութեամբ:**

**Կարապետ Տաքետեան**

Պ.- Նկատի ունենալով տիրող մթնոլորտը՝ Հաստատութենէն ներս, ճիշդ կը նկատեմ անոնց կանուխ վերադարձը:

**Վիոլէթ Թաշճեան**

Պ.- Աշակերտներուն մեկնումը կ'ուզէի թէկուզ մի քանի օր ուշ, բայց նախատեսուած կերպով:

**Հայարփի ՏԵՄԻՐՃԵԱՆ**

Պ.- Պիշերօթիկ աշակերտներու կանուխ տուն վերադառնալու որոշումը կանխամտածուած քայլ է:

**Հ.- Եթէ իշերօթիկ բաժինը ոցելու որոշումը չեղեալ նկատուէր, ի՞նչ բարեփոխումներ պիտի ուզէիք տեսնել Մել ՊՆԵԱՆԻ Կըրթա-դաստիարակչական ծրագրներու մէջ եւ ընկերային կեանքէն ներս:**

**Կարապետ Տաքետեան**

Պ.- Նախքան նոր ծրագիրներու մասին արտայայտուիլը, մեծապէս պիտի փափաքէի, որ աշխատակազմի իւրաքանչիւր անդամ յստակ գնահատական ունենար Մելգոնեանի առաքելութեան մասին: Մնացին անոնք միայն, որոնք կը հաւատային Մելգոնեանին:

**Վիոլէթ Թաշճեան**

Պ.- Կրթական կեանքը իր տարբեր շերտերով կը կարծեմ որ բարեփոխումներու եւ զարգացման ենթակայ գործընթաց մըն է: Նոյնը պիտի ըլլայ պարագան աննախընթաց պատմութիւն ունեցող եւ նոր մարտահրաւերներու դիմաց կանգնող Մելգոնեանի պարագային: Մտածումներ եւ նախաձեռնութիւններ միշտ առկայ են: Այս հանգրուանին սա-

կայն, կը կարծեմ թէ կարելորագոյն բարեփոխումը՝ աշակերտութիւնը անորոշութենէն յստակացում տանիլն է. անոր կրթութիւնը չխանգարելն է:

**Հայարփի ՏԵՄԻՐՃԵԱՆ**

Պ.- Մելգոնեանի գիշերօթիկ «աքիլլէսի գարշապարը» միշտ հարցերու նկատմամբ անձնական մօտեցում ունենալը եղած է պաշտօնեաներու կողմէ: Պէտք է հիմնական-անփոփոխ դպրոցական քաղաքականութիւն գոյութիւն ունենայ, որուն մասին կասկածներու եւ տարակարծութիւններու տեղի չտրուի՝ բոլորին անխտիր հետեւելիք «օրէնքներու համակարգ»: Ընկերային կեանքի առօրեայ ընթացքը, կարգ ու կանոնը, հունի մէջ պահելու համար ալ պէտք է ոչ այնքան «ճկուն» վերաբերմունք պաշտօնեաներու կողմէ:

**Հ.- Տարօրինակ չէ՞ք տներ, երբ կար մը պաշտօնեաներ այս օրերուն կը հեռաձայնէն իշերօթիկ աշակերտներու ծնողներուն եւ կը յորդորեն, որ ալիք Սեպտեմբերին իրենց զաւակները Մել ՊՆԵԱՆ չղրկեն, հակառակ որ, ըստ պաշտօնական հաղորդարութեան, Հաստատութեան իշերօթիկ բաժինը բաց պիտի մնայ մինչեւ Յունիս 2005-ը:**

**Կարապետ Տաքետեան**

Պ.- Ես անուղղակիօրէն կը լսեմ այս հեռաձայնային խօսակցութիւններուն մասին: Հաստատութեան պատասխանատուութիւնն է երեխային ապագայ ուսումնական ընթացքին մասին լուծում առաջարկել: Եւ այս կատարել ծնողներու հետ համագործակցաբար, որպէսզի թէ աշակերտները եւ թէ ծնողները յստակ տեսնեն իրենց ապագան:

**Վիոլէթ Թաշճեան**

Պ.- Բնականաբար:

Մեր բոլորին պարտականութիւնն է, որ Մելգոնեանը շարունակէ իր երթն ու առաքելութիւնը հայ իրականութեան մէջ. միշտ հաւատարիմ՝ Ամմահ Բարերարներու լուսաշող տեսիլքին:

**Հայարփի ՏԵՄԻՐՃԵԱՆ**

Պ.- Յունիս 2005 Հաստատութեան գիշերօթիկ բաժնի գոցելու որոշումին սխալ ըլլալը ընդունելու այնքան ալ դժուար չէ. բայց երբ հսկայական ձիւնագունդի պէս առջեւը կը գտնես այդպիսի որոշումի մը հետեւանքները, ծայրայեղութիւններու տեղի կու տաս՝ «խեղդուող փրփուրէն ալ կը բռնուի ...»

**Հարցազրոյցը վարեց՝ 2. դասարանցի մը**

*ՀԲԸՄ Մելգոնեան Կրթական Հաստատութեան պարբերաթերթ «Հայացք» Յունիս 2004*



## ՀԱԼԼԵՅԻ ՔՈՄԵԹՆ ԵՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՄԵՏԱՂԱԴՐԱՄԻՆ ՎՐԱՅ

Կարելի՞ է, որ թագաւորին թագին վրայի աստղաձեւը Հալլէյի քոմէթը ըլլայ: Հետազօտողները կ'ըսեն, թէ հազուագիւտ հին մետաղադրամին վրայի աստղը կրնայ Հալլէյի քոմէթին նախնական ձեւը ըլլալ:

Հայ եւ իտալացի հետազօտողներու համաձայն, մետաղադրամը, ք. Ա. 95 –55 թուականներուն իշխած հայոց Տիգրան Մեծ Բ. թագաւորին գլուխը կը պատկերէ, իսկ թագին վրայի կոր պոչով աստղը, կրնայ ք. Ա. 87 թ. Հալլէյի քոմէթին անցքը ներկայացնել:

Գիտնականներու այս հետազօտութիւնը Արքայական Աստղագիտական ընկերակցութեան "Astronomy and Geophysics" պարբերաթերթին մէջ պիտի հրատարակուի:

Հալլէյի քոմէթը, որ վերջին անգամ տեսնուած էր 1986–ին, երկրագունդի պատմութեան մէջ երեւցած է կանոնաւոր յաճախակաւութեամբ 1531–ին, 1607–ին եւ 1682–ին:

Այս իրողութիւնը Էտմոնտ Հալլէյը առաջնորդեց 1705–ին յայտարարելու, թէ այս նոյն քոմէթն էր որ ամէն 76 տարին անգամ մը կ'անցնէր երկրագունդին ծիրէն: Ան ճշգրտօրէն նախատեսեց որ 1758–ին դարձեալ պիտի վերադառնայ եւ որուն համար քոմէթը իր անունով Հալլէյ անուանուեցաւ: Այժմ հետազօտողները յաւելեալ փաստեր գտած են, որոնք կը նշեն թէ քոմէթը Հալլէյի ծնունդէն հազարաւոր տարիներ առաջ արդէն նշանաւոր էր:

Տիգրան Մեծ Հալլէյի քոմէթը կրնար տեսած ըլլալ, երբ ան ք. Ա. 87 թ. Օգոստոս 6–ին անցաւ արեւին շատ մօտէն: Հետազօտողներու կարծիքով քոմէթը պետք էր որ «արձանագրութեան արժանի մեծ իրողութիւն մը» եղած ըլլար:

Քոմէթին երեւումը Հայաստանի մէջ օգտակար կրնայ ըլլալ ճշգրտօրէն թուարկելու մետաղադրամին թուականը: Այսպէս մետաղադրամին թուականը ետ կ'երթայ մինչեւ ք. Ա. 83 թուականը, երբ Տիգրան Մեծ գրաւեց այդ ժամանակուայ Սուրիոյ մայրաքաղաք Անտիոքը:

Հալլէյի քոմէթը 15 քմ. երկարութեամբ աղտոտ ձիւնէ եւ սառէ կազմուած գնդակ մըն է: Ուրիշ քոմէթներու նման որոնք կ'անցնին երկրագունդի մօտէն ժամանակ առ ժամանակ, ան շատ անսովոր ծիր մը ունի, որ կը փոխուի երբ արեւի մեծ արբանեակներ կը քաշեն իր ծիրը:

Աստղագետ Վինս Ֆորտը, Զանպեռայի Աւստրալիական Ազգային Համալսարանի Աստղագիտութեան եւ Աստղաբնագիտութեան Հետազօտակամ Դպրոցէն կ'ըսէ, թէ քոմէթը շատ արեւի մեծ եւ արեւի փայլուն պետք է եղած ըլլար 2000 տարիներ առաջ:

«Երբ քոմէթները կու գան արեւին շուրջ, մեծ քանակութեամբ նիւթեր կը կորսնցնեն որոնք կը հասնին մինչեւ 10%» կ'ըսէ Ֆորտ: Թէեւ քոմէթը այս տարողութեամբ նիւթ չէր կորսնցներ, դարձեալ ան պետք է ժամանակի ընթացքին պզտիկցած ըլլայ, քանի որ արեւը այրած է անոր սառցապատ փոշին եւ կազը:

Ֆորտ կ'ըսէ, թէ Հալլէյի քոմէթին երեւման մասին ցարդ հաստատուած ամենահին դիտարկումը ք. Ա. 20 Մայիս 240 թուին գրուած չինական արձանագրութիւնն է:

Ան կ'ըսէ նաեւ, թէ արուեստը յաճախ Հալլէյի քոմէթին տեսնուելուն փաստարկման աղբիւր եղած է:

Օրինակի համար Պայեօ–ի ասեղնագործութիւնը կը ներկայացնէ քոմէթը իբր առաջնորդող՝ դէպի 1066 թուականի Հասթիկզի ճակատամարտը: Բայց արուեստը նաեւ սխալ ուղղութեան առաջնորդած է աստղագետները, կ'ըսէ ան: «Ճիշտօրէն նկարեց Հալլէյը Զրիստոսի ծնունդը պատկերող տեսարանին մէջ, հաւանաբար որովհետեւ տեսած էր Հալլէյի քոմէթը եւ տպաւորուած անկէ», բայց կ'ըսէ Ֆորտ, «քոմէթը երեւցած էր ք. Ա. 12 թուականին, Յիսուսի ծնունդէն շատ առաջ»:

The Armenian Mirror – Spectator  
Թարգմանեց՝  
Ս. Թ.






**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԹԱՑԻ ԿՐԿՆԱԿԻ ԳՆԱՐԱՏԱՆՔ**



Ամերիկայի Միացյալ Նահանգներու բարեգործական կազմակերպութիւններու հսկիչ մարմինն՝ Charity Navigator-ի համացանցին կայքի տնօրէն Trent Stamp, Սեպտեմբեր 2002-ին կը հաստատեր, թէ ԶԲԸՄ-ը կը դասուի աւելի բարձր քան «Ամերիկեան Կարմիր Խաչը», «Հարվըրտ Համալսարանը», «Փրկէնք Երեխաներ Հաստատութիւնը» եւ Փետրուար 2003-ին կը յայտարարեր, թէ ԶԲԸՄ-իութիւնը անգամ մը եւս առաւելագոյն չորս աստղերու արժանացած է, որովհետեւ բաղդատած տարբեր ամերիկեան բարեգործական հաստատութիւններու, ԶԲԸՄ-իութիւնը կը գերազանցէ զանոնք իր ելեւմտական բարուք մատակարարութեամբ: Պր. Stamp շնորհաւորելէ ետք ԶԲԸՄ-ը իր արձանագրած յաջողութեանց համար, կ'աւելցնէ թէ «Այս երկրորդ տարին է որ Միութիւնը կ'արժանանայ այսպիսի աննախընթաց դասաւորումի մը, մանաւանդ երբ այդքան դժուար էր դիմագրաւել անցեալ տարուան տնտեսական մարտահրաւերները»:



«ԶԲԸՄ-ը» ըսած է ան «սքանչելի աշխատանք կը տանի, վստահեցնելով որ նուիրատուներուն իրաքանչիւր տողարը կը ծախսուի ամենալուրջ պատասխանատուութեամբ» եւ ան կը շարունակէ. «ԶԲԸՄ-ը իմաստուն ընտրանք մըն է գիտակից նուիրատուներու համար»:

Յուշարար, Մարտ 2004

**ՇԱՐՈՒՆԱԿԵ ԱՄԵՐԻԿԱ**

ԶԲԸՄ-իութիւնը կը շարունակէ իր ջանքերը, իր կրթական հաստատութիւններուն համար ստեղծելու կարելի լաւագոյն պայմաններ, համապատասխանելու կեանքի աճող ու փոխուող պահանջներուն: Միութեան Սօնթէվիտոյի (Ուրուկուէյ) Նուպարեան – Մանուկեան վարժարանը ենթարկուեցաւ նշանակալից ընդլայնման: Նոր, երեք յարկանի համալիրը ունի կարգ մը առաւելութիւններ, ներառեալ երկու մանկապարտէզ, հինգ դասարաններ եւ Սամ Սիմոնեան սրահը:

ԶԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Սամ Սիմոնեան եւ իր տիկինը Սիլվա, Միութեան երեք հարիւր անդամներուն հետ միատեղ ներկայ գտնուեցան վարժարանին պաշտօնական բացումին:

ԶԲԸՄ-ի նախագահ Տիար Պերճ Սեդրակեան խօսք անելով ըսաւ. «Ի դիմաց Կեդրոնական Վարչական Ժողովին, կը փափաքիմ իմ խորին գնահատանքս յայտնել Տէր եւ Տիկին Սամ Սիմոնեաններուն, իրենց այցելութեան եւ վարժարանին ընդարձակման իրականացման համար իրենց տարած ճիգերուն: Ապա՝ Տիար Սեդրակեան աւելցուց, «Շատ գոհ եմ որ Սօնթէվիտոյի հայկական գաղութը կը շարունակէ աջակցիլ իր յաջորդ սերունդին, այսպիսի խանդավառութեամբ»:

Տիար Սամ Սիմոնեան Սօնթէվիտոյի եւ Պուէնոս Այրեսի ԶԲԸՄ-ի անդամներուն հետ միասին հանդիպում մը ունեցաւ Ուրուկուէյի փոխ – նախագահ Լուիս Զիբրո Լոփեզի հետ: Հանդիպումը ծառայեց արդէն իսկ երեք տասնամեակ



առաջ, այդ ժամանակույ մասնաճիւղին օրով կայացած զօրաւոր յարաբերութիւնները ամրապնդելու ՅԲԸՄ-ի եւ Ուրուկուէյի կառավարութեան միջեւ: ՅԲԸՄ-ի Պուէնոս Այրեսի մասնաճիւղի անդամները որոնք զօրաւոր կապեր ունին Հարաւային Ամերիկայի քոյր հայ գաղութին հետ, նոյնպէս հանդիպումին ներկայ գըտնուեցան:

Տէր եւ Տիկին Սամ Սիմոնեան, Ուրուկուէյէն մեկնեցան դէպի Պուէնոս Այրես, Արժանթին՝ հանդիպելու ՅԲԸՄ-ի Մարիա Մանուէլեան Հաստատութեան շրջանաւարտներուն:

Համաձայն ընկալեալ սովորութեան, Ուրբաթ գիշեր ընթրիք մը տեղի ունեցաւ Արմենիա պողոտային վրայ գտնուող ՅԲԸՄ-ի Նագարեան սրահին մէջ: Տէր եւ Տիկին Սիմոնեաններ առիթը ունեցան հանդիպելու գաղութին անդամներուն մեծ մասին, եւ զգացուեցան հանդիպելով այդքան մեծ թիւով մարդոց հետ, որոնք կը շարունակեն քաջալերել ՅԲԸՄ-ի ձեռնարկները:

Սիմոնեանները, առիթը ունեցան նաեւ ներկայ գտնուելու իւրայատուկ համերգի մը, որ տեղի ունեցաւ քաղաքի հռչակաւոր Քոլըն Թատրասրահին մէջ:

Աւելի քան 700 ներկաներ վայելեցին այդ երաժշտական հանդէսը, որ միացուցած էր Հարաւային Ամերիկայի հայկական լաւագոյն երեք երգչախումբերը՝ Կոմիտաս, Շնորհալի եւ Կռունկ:

Սոյն երեկոյին նշուեցաւ նաեւ Կոմիտաս երգչախումբի հիմնադրման 75-ամեակը:

Երգահանդէսի աւարտին Պուէնոս Այրեսի ատենապետին եւ փոխ ատենապետին հետ, Սամ Սիմոնեան պարգեւներ շնորհեց երեք երգչախումբերուն, գնահատելով իրենց նուիրումը, պահպանելու հայկական երաժշտութիւնը սփիւռքի մէջ:

Թրգմ. Անի Պողոսեան

## ՆԻՒ- ԵՈՐԸ

Շաբաթ 5 Յունիս 2004-ին աւելի՛ քան 1000 հանդիսատեսներ ներկայ գտնուեցան ՅԲԸՄ-ի Անդրանիկ Պարախումբի «Ճամբորդութիւն Պարի Ընդմէջէն» վերջին ներկայացումին, Նիւ Եորքի Լիսըլըն Կեդրոնի Ալիս Թուլլի սրահին մէջ:

Ներկայացումը մասնաւոր նշանակութիւն ուներ Անդրանիկի պարողներուն եւ կազմին համար, որովհետեւ ան նուիրուած էր խումբին հիմնադրման 35-ամեակին: Տասնամեակներու ելոյթներէ ետք, Անդրանիկի հայ եւ ոչ հայ երկրպագուները տակաւին կը շարունակեն վայելել հայկական ժողովրդական գունեղ զգեստները եւ աւանդական պարարուեստը:

Բացման առաջին համարը «Հայաստան», յագեցած էր պայծառ գոյներով, եւ միաձուլուած՝ տղոց աշխոյժ եւ պոռթկուն սուրբու պարով:

Ներկայացուած պարերուն զանազանութիւնը մասնաւորապէս տպաւորիչ էր: Հայկական պատմական շրջաններու պարերը միշտ մաս կազմած են Անդրանիկի ներկայացումներու պարացանկին: Այս տարի ներկայացումը կ'ընդգրկէր հազուագիւտ պար մը Համբէնի շրջանէն:

ՅԲԸՄ-ի Նիւ - Եորքի Անդրանիկ պարա-

խումբին 35-ամեակի այս ելոյթին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ 60 երիտասարդներ՝ Ամենայն Սրբոց հայկական եկեղեցիին «Հայ Պար» եւ Նիւ Ճըրզիի Համագգային Ընկերակցութեան պարի խումբերը, «Լորքէ» եւ «Ազգագրական» պարերով:

Երեկոն վերջացաւ Անդրանիկի պարողներուն կողմէ ներկայացուած հոգեգմայլ «Տէր Ողորմեա - Աւարայր» պարով, որ վերապրեցուց հին պաշտամունքային աղօթքին իմաստը որ հարազատ է ամբողջ աշխարհի հայերուն համար:

1970-ին կազմուած, ՅԲԸՄ-ի Անդրանիկ պարախումբը կը բաղկանայ հայ երկսեռ երիտասարդութենէ, նուիրուած է ներկայացնելու պարը որպէս հայկական աւանդական ժառանգութեան մէկ մասը:

Որպէս արդիւնք այն մեծ յաջողութեան զոր ունեցաւ «Ճամբորդութիւն Պարի Ընդմէջէն» ելոյթը Նիւ - Եորքի մէջ, ծրագիրներ կը պատրաստուին 2004-ի աշնան զայն կրկին ներկայացնելու Նիւ - Եորքի՝ եւ խիստ հաւանօրէն նաեւ այլ քաղաքներու մէջ:

Թրգմ. Անի Պողոսեան



Վերջերս ուրախութեամբ ականջալուր կ'ըլլանք մեր շարժումը յարաբերաբար երիտասարդ տիկիներուն ցուցաբերած հետաքրքրութեան Այծեմնիկ Հանստեան Տան մէջ ապաստան տած տարեցներուն նկատմամբ եւ կատարած աշխատանքին անոնց կեանքը աւելի տանելի եւ հաճելի դարձնելու համար:

Կը շնորհատրենք այս Շարժման մէջ ընդ յկուած տիկիները, յարատեւութիւն կը մաղթենք իրենց եւ կը յուսանք որ ե իսլաւահայ երիտասարդ տիկիներ կը հաւաքուին նաեւ զիրենք հետաքրքրող ուսուցողական, ճանաչողական եւ այլ նիւթեր արծարծելու եւ կարծիքներ ու իտելիքներ փոխանակելու համար:

Ստորեւ որոշ յայտարարումներով կը ներկայացնենք Լոս Անճելոսի ՀԲԸՄ-ի «Հայ Կին» յանձնախումբին 10-ամեակի ձեռնարկին նկարա թականը, շղափար մը տալու անոնց կատարած աշխատանքին մասին:

«S.»

Նոյեմբեր 15. 2003-ին Փասատինայի ՀԲԸՄ-ի Ալեք Մանուկեան Կեդրոնի Պոյաճեան Սրահին մէջ տեղի ունեցաւ ուշագրաւ ձեռնարկ մը միաժամանակ նշելով Միութեան Հայ Կին Յանձնախումբին 10-ամեակը:

ՀԲԸՄ- Հայ Կին վարչութեան Ատենապետուհի Տիկ. Սոնա Եագուպեան, բացման խօսքով ամփոփ պատկերը գծեց ՀԲԸՄ-ի Հայ Կին Յանձնախումբին տարած գործունեութեան, անցնող տասնամեակի ընթացքին: Յանձնախումբը սերտօրէն կը գործակցի Երեւանի Ընկերաբանական Հետազոտութեան Բաժնի վարիչ՝ Դոկտ. Լիւտմիլլա Յարութիւնեանի հետ: Անոնք ամէն տարի Փասատինայի Ալեք Մանուկեան Կեդրոնին մէջ կը կազմակերպեն յատուկ ցուցահանդէս մը ուր կը ցուցադրուին հայ կիներու ձեռնային ստեղծագործութիւնները: Տիկ. Եագուպեան անդրադարձաւ նաեւ Գիւմրիի եւ Երեւանի մէջ ՀԲԸՄ - Հայ Կին-ի նախաձեռնութեամբ կեանքի կոչուած Յիլի Կանանց Կեդրոններու զարգացման ի խնդիր կատարած աշխատանքներուն ու հետեւողական ջանքերուն մասին: Հայ Կին-ը կը քաջալերէ նաեւ գիրի ու մշակոյթի նուիրուած իգական սեռի ներկայացուցիչները, ծանօթացնելով անոնց գործերը՝ ընթերցողները իրազեկ դարձնելու նոր հրատարակութիւններուն: Տիկ. Եագուպեան հանգամանօրէն ներկայացուց օրուան դասախօսները:

ա- Դոկտ. Անի Գալայճեան, Նիւ Եորքէն հրաւիրուած, Նիւ Եորքի Ֆորտհըմ համալսարանի հոգեբանութեան դասախօս, ՄԱԿ-ի մէջ Ժողովրդային Տեղեկատուութեան Կեդրոնի Փոխ-Ատենապետ (NGO/DPI) եւ Մարդկային Իրաւանց Յանձնախումբի Գանձապահն է: Հայաստանի երկրաշարժին յաջորդող ամիսներուն մօտէն աշխատած է աղէտեալ գօտիի երախաներուն հետ, անոնց միխթարական ու մասնագիտական օգնութիւն հասցնելով: Ան իր ուսումնասիրութիւնները ամփոփած է "Disaster and Mass Trauma - (1995)" խորագրով հատորի մը մէջ:

Դոկտ. Գալայճեան իր ելոյթին մէջ անդրադարձաւ ՄԱԿ-ի մէջ ոչ-կառավարական կազմակերպութեան գծով տարուած կարեւոր աշխատանքին, ի նպաստ՝ ցեղասպանութեան եւ մարդկային իրաւունքներու ճանաչման հարցին:

բ- Տիկ. Սոնա Չէյթեան, մասնաւորաբար Լոս Անճելոսահայ համայնքէն ներս յարգելի ծանօթ մտաւորական մըն է եւ Հայ Կին-ի գործունեայ աշխատակից: Ան բժախնդրութեամբ պատրաստած իր ելոյթով կեդրոնացաւ Հայաստանի մէջ «Ոչ-Կառավարական» կազմակերպութեանց գործունեութիւններու տարողութեան ու զոյավիճակին մասին: Երկու հիւր դասախօսներն ալ մեծ գնահատանքի արժանացան



ներկաներուն կողմէ:

Գեղարուեստական բաժնով ելոյթ ունեցաւ Զայաստանէն շրջանաւարտ, սախկին Զալէպահայ սրնգահար Տիկ. Չուարթ ճուլիայեան: Տաղանդաւոր արուեստագիտուհին ներկաները դիւթեց իր հրամցուցած երկու գեղեցիկ երաժըշտական կտորներով՝ Կլուքէն եւ Ա. Սպենդիարեանէն:

Յայ Կինի 10-ամեակին առթիւ, հայրական օրհնագրով իր շնորհաւորանքը կը փոխանցեր արեւմտեան թեմի տորընտիր Առաջնորդ՝ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան: Առաջնորդ հայրը բարձր գնահատելով ԶԲԸՄ – Յայ Կին-ին կատարած աշխատանքը յարատեւութիւն կը մաղթեր, միաժամանակ՝ քաջալերական խօսքերով իր պատգամը կը փոխանցեր ըսելով թէ՝ «Կը վստահեցնենք ձեզ, որ որպէս հոգեւոր Առաջնորդը արեւմտեան թեմի, մենք պատրաստակամ ենք զօրակցելու ու խանդավառելու Ձեզ՝ Ձեր առաքելութեան մէջ»:

Դեկտեմբեր 12, 2003-ին Տիկ. Լենա Պգտիկեանին հիւրընկալ բնակարանին մէջ տեղի ունեցաւ այլ օգտաշատ դասխօսութիւն մը որ ուշագրաւ էր, որովհետեւ հրատապ ու այժմեական առողջապահական սիւթ մըն էր որ կը շօշափէր:

Բազմաթիւ կիներու կեանքը խլող, եւ գրեթէ ամէն ընտանիքի մէջ տեսակ մը սարսափելի երեւոյթ դարձած ախտ՝ կուրծքի քաղցկեղին

առաջըն առնելու համար Տիկ. Սոնա Կարմիրեան – Չաւզաւաթճեան սիւթին քաջածանօթ ելոյթով մը լուսաբանեց ներկաները: Զամատարած մահացու հիւանդութիւն մըն է կուրծքի քաղցկեղը: Կանուխ ախտաճանաճումը կրնայ կեանքեր փրկել, որուն համար անհրաժեշտ է գիտակից եւ ուշադիր ըլլալ առօրեայ կեանքին հետ կապ ունեցող որոշ հարցերով: (Օրինակ՝ ամէն լոգանքի ինքնաքննութիւնը, կեանքի հանդէպ լաւատես վերաբերմունքը, կեանքը բարեսիրական եւ օգտակար աշխատանքներով իմաստալից դարձնելը, ելլն.): Պետք է տեղեակ ըլլալ թէ մարմնի վրայ ամէն ուռեցք սարսափազդու չէ: Կրնան անմեղ ուռեցքներ ալ ըլլալ:

ԶԲԸՄ-ի Տիկեանց Յանձնախումբի Ատենապետուհի Տիկ. Անժէլ Գարայեանի սախածեռնութեամբ կազմակերպուած այս ձեռնարկը իր նպատակին հասաւ ներկաները լաւագոյնս լուսաբանելով: Իսկ մուտքի գումարէն գոյացած հասոյթը պիտի յատկացուի Զալէպի ԶԲԸՄ-ի քոյր յանձնախումբին՝ Գալուստ Կիւլպէնկեան տորաշէն սրահին կահաւորման ծախսերուն նպաստելու:

«Յուշարար» Թիւ 1 Ապրիլ 2004

## **ԳԱՀԻՐԷ - ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ**

Հինգշաբթի 8 եւ Ուրբաթ 9 Յուլիս 2004-ին, Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզարանէն ներս երկօրեայ բանակում – հադիպում մը տեղի ունեցաւ, որուն մասնակցեցան մարզարանին 6-13 տարեկան տղաքն ու աղջիկները:

Բանակումին ընթացքին տեղի ունեցան զանազան խաղեր, դաստիարակչական բնոյթի ժամանցներ եւ խարոյկահանդէս, որ որեւէ բանակումի ամենասիրուած ու սպասուած պահն է, աշխոյժ եւ ուրախ իր երգերով ու շուրջպարերով:

Այս անգամ եւս բանակումին պատասխանատուները իրենց կարելին ըրած էին բանակումը հաճելի եւ դաստիարակիչ դարձնելու, բանակումին մասնակցող 30 մանուկներուն եւ պատանիներուն համար:



# ՆՈՐ ՇՐՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

## ԱԼԳՈՄ՝ ՆՈՒԻՐՈՒՄԸ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ


Արժեքաւոր, գեղեցիկ, ինքնատիպ եւ շքեղ: Առանց վարանելու այսպէս կարելի է բնութագրել այս հրատարակութիւնը:

Երաժշտական գրականութեան համար կարեւոր ներդրում մը, իրականացուած Սփիւռքի ու Հայաստանի մէջ իր երաժշտական բազմաթիւ ուսումնասիրութիւններով եւ հրատարակութիւններով արդէն յայտնի եգիպտահայ երիտասարդ երաժշտագետ, Հայկ Աւագեանի ջանքով եւ Գահիրեի ԶԲԸՄ-ի «Սաթենիկ Չազըր Հիմնադրամ»-ի հովանաւորութեամբ:

Արամ Խաչատուրեանի ծննդեան 100-ամեակը առիթ ստեղծեց որ Հայկ Աւագեան հանրութեան ներկայացնէ Արամ Խաչատուրեանի ստեղծագործութիւններուն իր անձնական հաւաքածոն, որ կը պարունակէ հեղինակին ամենահին ժամանակներէն մինչեւ մեր օրերը լոյս տեսած ձայնագրութիւններ, աշխարհի զանազան երկիրներու մէջ՝ Մոսկուայէն մինչեւ Կուաթեմալա եւ Շուէտէն մինչեւ Հարաւային Ափրիկէ:

Անգլերէն լեզուով հրատարակուած այս գունաւոր ալպոմը կը բավանդակէ երգահանի գործերէն 152 ձայնագրութիւններու մասին տեղեկութիւններ եւ անոնց լուսանկարները: Ալպոմը բաժնուած է երկու մասի:

Առաջին մասը ընտրանի մըն է սկաւառակներու (LP) եւ երկրորդը՝ խտասալիկներու (CD): Իւրաքանչիւր էջ յատկացուած է մէկ ձայնագրութեան եւ կը բովանդակէ ձայնագրութեան գլխաւոր եւ ներքին անուանաթերթերուն նկարները: Նկարներուն կցուած են տուեալ սկաւառակին կամ խտասալիկին




մասին տեղեկութիւններ՝ ընդգրկած գործերը, կատարողները, ձայնագրութեան եւ արտադրութեան վայրերն ու թուականները:

Ինչպէս հեղինակը իր նախաբանին մէջ կը նշէ, անկասկած Խաչատուրեան ունի շատ անելի ձայնագրութիւններ քան ալպոմին մէջ ներկայացուածները: Այս հրատարակութիւնը կրնայ որպէս սկզբնական աղբիւր ծառայել Խաչատուրեանի ամբողջական գործերուն հրատարակման:

Արամ Խաչատուրեանի 100-ամեակին առիթով լոյս տեսած այս ալպոմը որ իրականացուցած է Նուպար տպագրատունը, գնահատելի եւ շնորհակալ աշխատանք մըն է որ հպարտութիւն կ'առթէ իւրաքանչիւր հայու:

«S.»





# ԱՆԴԱՄԱԿԱՆ

## ԾՆՈՒՆԴ

ՀԲԸՄ-ի Գահիրեի անդամներին Տեր եւ Տիկին Լեւոն եւ Լալա Նիկոլեաններ 10 Մայիս 2004-ին բախտաւորուած են առջիննէկ աղջիկ զաւակով մը զոր անուանած են Լիա-Նորա:

Կը ջնորհաւորենք Նորածինին ծնողքը, Մեծ ծնողները, Տոքթ. եւ Տիկին Ա. Նիկոլեանը եւ Տեր եւ Տիկ. Մ. Շամլեանը ու Լիա-Նորային կը մաղթենք առողջ եւ վարդագոյն կեանք:

## ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ կ'արձանա րենք նշանախօսութիւնը Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Սկաւտական Շարժումի խմբապետուի Քարին Լէյլէկեանի ընդ ժան-Քիւռ Աւա եանի (Գահիրէ), որ տեղի ունեցաւ 12 Յուլիսին Աղեքսանդրիոյ մէջ:

Մեր սրտագին ջնորհաւորութիւնները խօսեցեալ զոյգին, անոնց ծնողներուն, Տեր եւ Տիկին Մ. Լէյլէկեանի եւ Տեր եւ Տիկին Ժ. Աւագեանի եւ Մեծ ծնողներուն Տիկին Մ. Նշանեանի եւ Տեր եւ Տիկին Բ. Աւագեանի:

## ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ

Ուրախութիւն էր Յուլիս 4, 2004-ին ներկայ տնուի «Տեղեկատու»-ի եղարուեստական ձեւաւորման պատասխանատու Շահէ Լուսարարեանի ընդ Նաթալի Ասլանեանի Ս. Պսակի խորհուրդին, շնորհաւորել զիրենք եւ իրենց մաղթել անամպ, երջանիկ եւ հայաբոյր ընտանիք, շնորհաւորել նաեւ կնքահայրը, ՀԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիւղի օժանդակ անդամ Տիար Կարի Քէհեայեանը, Տեր եւ Տիկին Գարուստ Ասլանեանն ու ամուսնացեալ զոյ ին բոլոր հարազատները:

ՀԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիւղի վարչական անդամ, «Տեղեկատու»-ի աշխատակից եւ նախկին խմբա իր Տիար Հարի Վ. Չէչճէնեանի ընդ Օր. Նարինէ Ներսէսեանի (Երեւան) Ս. Պսակի խորհուրդը տեղի ունեցաւ Էջմիածինի Ս. Հռիփսիմէ տաճարին մէջ, Հին շաբթի 9 Յուլիս 2004-ին, կնքահայրութեամբ փեսային եղբոր՝ Տեր եւ Տիկին Ռաֆֆի Չէչճէնեանի:

Ուրախութեամբ կը ջնորհաւորենք ամուսնացեալ զոյգը, իրենց ծնողները՝ Տիկին Անի Չէչճէնեանը եւ Տիկին Ներսէսեանը նաեւ բոլոր հարազատները, իսկ ամուսնացեալ զոյգին կը մաղթենք բարգաւաճ, խաղաղ ու երջանիկ կեանք:

«Տ.»

